ՀԻՆ ԻՐԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԸ

Լիլիթ Աբաջյան

Շարունակելով Վ. Մ. Մասոնի «Առաջին քաղաքակրթություններ» գրքի թարգմանաբար ներկայացումը բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների համար, առաջարկում ենք Հին Իրանի մշակույթները գլուխը վերոհիշյալ գրքից։

Իրանի բնական պայմանները աչքի են ընկնում ինչպես լանդշաֆտային, այնպես էլ կլիմայական մեծ բազմազանությամբ։ Արևմտյան սահմանի երկայնքով հյուսիս-արևմուտք ուղղվածությամբ ձգվում է Զագրոսի լեռնային սիստեմը, կտրտված մի քանի կիրճերով, որոնցով տեղի էր ունենում կապը տարբեր ուղղություններով։ Մեղմ և խոնավ տեղումնաշատ կլիման ապահովում է այստեղ հացազգիների ցանքսը «անձրևի տակ» սկսած 1000 մ ծովի մակարդակից։ Փաստորեն բնական պայմանները նույնն են ինչ Զագրոսի այն մասում, որը գտնվում է Իրաքի տարածքում և զարմանալի չէ, որ հենց այստեղ են կենտրոնացված արխայիկ երկրագործների և անասնապահների հնագույն հուշարձանները։ Լեռնային հովիտներն ու գոգավորությունները լավ բավարարված են բազմաթիվ գետակներով։ Իրանի մեծ մասը գտնվում է Իրանական սարահարթում, որն իրենից ներկայացնում է լայնարձակ, ամռանը շոգ, ձմռանը ցուրտ, շատ տեղերում անջրդի անապատային-տափաստանային տարածություն։ Սարահարթը երիզում են, իսկ որոշ տեղերում կտրում, հզոր և լայն լեռնաշղթաներ՝ անառիկ և նույնքան չոր ու անբուսական։ Այս եզրային լեռների արտաքին լանջերի միայն նեղ շերտն է անտառածածկ։ Լեռների ստորոտների, գոգավորությունների և լեռնահովիտների ջրային աղբյուրներով ապահովված վայրերում կան օազիսներ։ Հարավային եզրային լեռնաշղթան շարունակում է Զագրոսի սիստեմը։ Հյուսիսային եզրի շղթան Էլբուրսն է և թուրքմենա-խորասանյան լեռներ են։ Անմիջապես Էլբուրսից հետո հարավային մերձկասպյան գոտին բարձր խոնավության շրջան է՝ ռելիկտային լայնասաղարթ անտառներով։ Ընդհանուր առմամբ Իրանի բնորոշ հատկանիշն է անբավարար խոնավությունը։ Շատ գետեր հոսք են ունենում միայն անձրևների ժամանակ։ Իրանյան սարահարթի նկատելի մասը արևակեզ սարավանդներ են, ավազի և խճաքարի ծածկույթով։ Հենց այդպիսին են Կենտրոնական Իրանի երկու մեծ անապատները՝*

* Չշփոթել կովկասյան Էլբրուսի հետ (նշումը՝ թարգմանչի)։

Դեշտե-Լուտը և Դեշտե-Քևիրը: Բնակլիմայական պայմաններով քիչ տարբեր են Իրանի ծայր հարավ-արևմուտքում, որն այժմ կոչվում է Խուզիստան: Այն կազմում է Միջագետքի ալյուվիալ ցածրավայրի մաս, որով հոսում են Քարուն և Կերկե գետերը: Բերրի հողերը, շոգ, չոր կլիման, մեծապես մոտեցնում է այս շրջանը հարավային Միջագետքի բնակլիմայական պայմաններին և Միջագետքը իր ազդեցությունն է ունեցել այս շրջանի պատմական զարգացման յուրահատկությունների վրա:

Իրանի նախնադարյան մշակույթի ուսումնասիրությունը սկսել է շատ վաղ և որոշ հարցերում անգամ առաջ է ընկնում հարևան Միջագետքի հուշարձանների հնագիտական ուսումնասիրությունից: Դեռ XIX դարի վերջում Ժ. դե Մորգանը Խուզիստանում պեղումների ժամանակ գտել է գունազարդ խեցեղենի համալիրներ, որոնք նա կոչեց Սուզա I և II (Morgan J., 1900, 1902): Այս համալիրները մինչև 30-ական թվականները պահպանում էին էտալոնային նշանակություն և դրանցով գիտնականները փորձում էին դասակարգել նոր բացված արխայիկ հուշարձանները: Ժամանակը ցույց տվեց Ժ. դե Մորգանի պեղումների անկատարությունը, որովհետև նա չէր նկատել Սուզա I և II միջև բազմամետր շերտերը և Մերձավոր Արևելքի հնագիտությունը սկսեց հիմք ընդունել Միջագետքի համալիրները: 30-ական թվականներին Խուզիստանում ֆրանսիական հնագիտական առաքելության հետ մեկտեղ պեղումները ընդգրկում էին նաև Իրանի նոր շրջանները: 1931-1933 թթ. Է. Շմիդտի արշավախումբը Դամգանայի շրջանում ուսումնասիրեց Թեփե-Գիսարը, որտեղ բացվեցին բրոնզի դարաշրջանի համալիրներ (Smidt, 1933, 1937): 1933-1937 թթ. Քաշանի մոտ Ռ. Մ. Գիրշմանը պեղեց Սիալկը (Chirshman 1938-1939): Հաջորդ տարիների սիստեմատիկ աշխատանքներից հարկ է նշել Զագրոսի և դրա նախալեռների վաղերկրագործական բնակավայրերի ուսումնասիրությունը (Ռ. Բրեյվուդի, Պ. Մորթենսենի, Կ. Ֆլաններիի և այլոց աշխատանքները): 1957 թ. սկսվեցին Իրանական Ադրբեջանի (Հասանլու նախագիծ) մեծ համալիրների ուսումնասիրությունները, որոնք ղեկավարում էր Ռ. Դայսոնը (Dyson, 1965 b): 60-ական - 70-ական թվականներին մեծացավ ուշադրությունը բրոնզե դարի հուշարձանների նկատմամբ (Յահյա-թեփե և Շահրի-Սոխտեի պեղումները Իրանի հարավ-արևելքում): Արևմտյան Եվրոպայի և ԱՄՆ շուկաներում էկզոտիկ հնությունների մեծ պահանջարկի պատճառով գանձագողությունը վաղ ծավալվեց Իրանում: Դրա հետ կապված շատ հուշարձաններ և հատկապես հին դամբարաններն անհուսալիորեն ավերվեցին, իսկ իրերը ցաք ու ցրիվ եղան բազմաթիվ մասնավոր հավաքածուներում (վերջին նյութերի մասին տես՝ Amiet, 1987): Իրանական կառավարությունը փորձում էր կազմակերպել հնագիտական

հուշարձանների հաշվառումը: Այն շրջաններում, որտեղից նյութերը բերվում էին հնավաճառների խանութներ, կազմակերպեցին սիստեմատիկ պեղումներ: Իրանի համալիրների վերաբերյալ հնագիտական հիմնական աշխատանքը երկար ժամանակ Դ. Մակ-Կաունի գիրքն էր համեմատական ստրատիգրաֆիայի մասին (Mac Cown, 1942): Համակարգը, որը հաշվի էր առնում նոր ստրատիգրաֆիկ աղյուսակները և մտցնում էր իրանական համալիրները, այդ աղյուսակում առաջարկվել է Ռ. Դայսոնի կողմից հիմնված Միջագետքի մշակույթների վրա (Dyson, 1965 a): Նախնադարյան Իրանի հուշարձանների պատմամշակութային մեկնաբանումը տրված է Վ. Մասսոնի աշխատանքներում (Массон, 1964 б): Կան մի շարք այլ աշխատություններ հին Իրանի հնագիտության և մշակույթի վերաբերյալ (Chirshman, 1951, Vanden Berghe, 1959, Porada, 1965 a):

Հին Իրանի հնագիտական հուշարձաններում արտացոլվել են այս երկրի պատմության և մշակույթի երեք խոշոր դարաշրջաններ: Առաջին շրջանը վաղերկրագործների և անասնապահների շրջանն է, երբ հաստատված կայուն մշակութային համալիրները ցեղային խմբերի շարժման հետ տարածվում են երկրով մեկ, ստեղծելով մի շարք տեղային օջախներ իրենց ներքին էվոլյուցիայով: Այս շրջանի մշակութային զարգացման գլխավոր գիծը թռիչքային փոփոխությունն էր: Հին Իրանի երկրագործական-անասնապահական տնտեսության կայացման գործում որոշիչ դեր է կատարել Ջարմոյի մշակույթը, կամ զագրոսային մշակութային ընդհանրությունը: Դրա նշանակությունը որպես սկզբնական մշակութային շերտի նկատելի է մի շարք համալիրներում, որտեղ այս կամ այն ձևով զգալի են զագրոսային ավանդույթները:

Հարավարևմտյան Իրանի մ.թ.ա. VI հազարամյակի վաղերկրագործական մշակույթը ներկայացված է միջագետքյան ցածրավայրի արևելյան ծայրամասում գտնվող Դեհ Լուրան դաշտավայրի համալիրների ուսումնասիրությամբ: Այս համալիրներում տեղի էր ունենում այն ավանդույթների աստիճանական զարգացումը, որոնք կազմավորվել էր Ալի-Քոշի արխայիկ հողագործների մշակույթի գոյության ժամանակ (Hole a.o. 1969.): Մուհամմեդ-Ջաֆար փուլում բնակավայրերում կային կավաշեն կացարաններ, որոնց ներսը հաճախ ներկած էր կարմիր օքրայով: Օքրայով ծածկված էին նաև կծկված կմախքները, որոնք գտնվում էին բնակավայրի տարածքում պեղված գերեզմաններում: Կավամանները ներկայացվում էին երեք խմբով՝ դեղնավուն մակերեսով խեցեղեն, գունազարդ խեցեղեն և կարմիր փայլեցված խեցեղեն: Վերջին խումբը ակներևաբար շարունակում է զագրոսյան մշակութային ընդհանրության ավանդույթները՝ դրանց հարավային տարբերակով, որը հայտնի է Թեփե-Գուրանից: Նույնը կարելի է ասել մարմարից ու ալեբաստրից պատրաստված ապարանջանների մա-

սին։ Այլ զարդերից կարելի է նշել ուլունքներն ու կախիկները, որոնք պատրաստվում էին Պարսից ծոցի խխունջներից և փիրուզից։ Վերջինս բերվում էր Իրանի հյուսիսային շրջանից։

Երկրագործական-անասնապահական տնտեսության հետագա զարգացումը նկատվում է մ.թ.ա. VI հազարամյակի կեսին Սաբզի փուլում, թեև մշակութային ժառանգականությունը այստեղ նկատվում է ավելի վատ՝ ուսումնասիրված նյութերի անցումային փուլում նյութի սակավության պատճառով։ Դա վաղերկրագործական համայնքի կողմից Խուզիստանի յուրացման ժամանակն էր։ ԴԵՀ Լուրանի հովտում Սաբզի տիպի նյութ գտնվել է վեց բնակավայրերում, բուն Սուզիանայում՝ 34։ Դատելով ամենայնից՝ Կերկե և Քարուն գետերի հովիտների նման յուրացումը հնարավոր չէր առանց դաշտերի արհեստական ոռոգման, ինչն ընդունում են բոլոր գիտնականները։ Դաշտերում մշակվում էր գարու մի քանի տեսակ՝ ցորեն, վուշ, ոսպ և վիկ (գլուլ)։ Հայտնվում են խոշոր եղջերավոր կենդանիներ, որոնք ներկայացված են վայրի ցուլերի ավելի փոքր տեսակներով։ Ընդհանուր առմամբ, զարգացման մակարդակը մոտ է Տիգրիսի միջին հոսանքում գտնվող Սամարրայի մշակույթին, որտեղ նույնպես առկա են արհեստական ոռոգման սկզբնական փուլերը։ Սամարրական կապերը նկատվել են դեռ Ջաֆարաբադ համալիրից ֆրանսիացի հնագետների կողմից դեռ 50-ական թվերին, նախքան ԴԵՀ Լուրան դաշտավայրի համալիրների ուսումնասիրությունները։

Համանուն բլրի Ջաֆարաբադ համալիրի ստորին շերտերում գտնվել է կոպիտ խեցեղեն, այդ թվում սննդի պահպանման համար. հատակի մասում թեք խոշոր անոթներ, խնոցիներ, կարասներ՝ նման հասսունյան մշակույթի անոթներին (Breton, 1947, Dollfus, 1978)։ Անոթների մի մասը զարդարված է պարզ երկրաչափական նախշով, որի մոտիվներում հաճախ կրկնվում են ներսը ցանցով նախշված շեղանկյուններ։ Մի դեպքում կարծես թե պատկերված են իրար ձեռքերից բռնած մարդիկ։ Հետաքրքիր է փորագրած նախշի առկայությունը, ինչը Ջաֆարաբադի խեցեղենի բնորոշ հատկանիշն է։ Բացի կավանոթներից Ջաֆարաբադի ստորին շերտերում գտնվել են կայծքարի թերթաշերտեր, ցլեպներ և նուկլեուսներ։ Մի շարք զարդանախշերի մոտիվներ և բարձր հատակի վրա օղակաձև տակով անոթներ համաժամանակյա են Սամարրայի հետ և հնարավոր է նաև, որ կրում են այս միջագետքյան մշակույթի ազդեցությունը։ ԴԵՀ Լուրան դաշտավայրում Թեփե-Սաբզ բնակավայրի պեղումները հաստատեցին քարե գործիքների դերի պահպանումը այս տիպի համալիրներում (Hole a.o. 1969)։ Գտնվել են խոշոր քարե փոցխերի գլխիկներ բիտումի հետքերով։ Քարից պատրաստում էին մանգաղների ներդիրներ։ Գտնվել են ներդիրների

այնպիսի արխայիկ ձևեր, ինչպիսիք են սեգմենտները։ Պատրաստվում էին սխեմատիկ անտրոպոմորֆ T-ձևի արձանիկներ, քարե ապարանջանները զարդարվում էին մատնեքներով։

Նստակեցության հետ կապված կենսակերպը, որն արտացոլվում է հնագիտական եռամասնության մեջ (ամուր, բարեկարգ կացարաններ, շքեղ անոթներ և փոքր քանդակ) աստիճանաբար տարածվում է Իրանով մեկ։ Կոպիտ ծեփածո խեցեղենը և կավածեփ կացարանները գտնվել են Խուզիստանից արևելք ընկած Ֆարսայի հուշարձաններում (Թալի Ջահրի Բ, Թալի Մուշկի, Թալի Բակուն Բ 1) և Քերմանում (Թալի Իբլիսի զրոյական շերտում, Թեփե-Յահյա VI A-E)։ Թեփե-Յահյայի ստորին շերտերում հազվադեպ հանդիպում է գունազարդ խեցեղեն, գտնվել է կնոջ քարե արձանիկ (Lamberg-Karlovsky 1970, 1986)։ Կանացի պտղաբերության աստվածության հավատքի տարածումը վաղերկրագործական շրջանի գաղափարախոսական կարևոր նորամուծություններից մեկն էր։

Նմանատիպ պատկեր կարելի է տեսնել նաև Իրանական Ադրբեջանում, որտեղ «Հասանլու» ծրագրի շրջանակներում պեղվել է Հաջի-Ֆիրուզ վաղերկրագործական մշակույթը, որը թվագրվում է մ.թ.ա. VI հազարամյակի II կեսով (Voigt, 1983)։ Այս մշակույթի բնակավայրերը գտնվում են Ուրմիա լճի շրջանում Սոլդուզ գետի բերրի դաշտավայրում։ Ոչ մեծ մեկ սենյականոց կացարանները կառուցվում էին հում աղյուսից՝ ներքին հարդարանքին հատկացնելով մեծ ուշադրություն։ Հատակները ծածկված են դեղին կավով և հաճախ ներկված էին կարմիր։ Օջախի մոտ գտնվում էր տնտեսական մասը։ Պահպանվել են խսիրի հետքեր։ Երբեմն հատակի տակ դնում էին անոթներ սննդի պահպանման համար, սակայն հիմնականում որպես պահեստ օգտագործում էին բնակելի կացարաններից դուրս շինությունները։ Կայծքարի գործիքները սահմանափակ են՝ հիմնականում մանգաղի ներդիրներ են։ Այս տիպի աշխատանքներում կայծքարը հավանաբար արդեն փոխարինվել էր պղնձով։ Կավանոթները երբեմն պատրաստվում էին շաբլոններով կողովի նման գործած, որոնց դաջվածքը երևում է հարթեցված մակերեսի տակ։ Կավի թրծումը անորակ է, գերակայում են դեղին փայլեցված անոթները, որոնց մակերեսը երբեմն ծածկված է կարմիր անգոբով։ Պատկերները արվում էին դեղին մակերեսին կարմիր կամ դարչնագույն պարփակված պարզ երկրաչափական տարրերով՝ խոշոր եռանկյունիներով և երկշեղ եռանկյունիներով (շևրոն)։ Այս մշակույթի հուշարձաններից մեկում Յահյա-Թեփեում բավականին շատ են քարե իրերը, այդ թվում անոթներ և ապարանջաններ, որոնք պարզորոշ ցույց են տալիս զագրոսյան ավանդույթները։ Մշակութային կապերի նույն ուղղությունը նկատվում է նաև խեցեգործության մեջ։ Դեղին գիպսից պատրաստվում էին ուլունքներ և արձանիկների գլուխներ։ Հա-

ջի-Ֆիրուզում գտնվել է կնոջ կավե սխեմատիկ արձանիկ լայն կոնաձև հիմքով, հավանաբար ցույց տալով նրա ուղղահայաց դիրքը: Առանձին, անհատական թաղումների հետ մեկտեղ կան նաև խմբակային թաղումներ: Թաղման ծեսում կարևոր տարր էր օքրան, որը մաղում էին հանգուցյալների վրա:

Հաջի-Ֆիրուզ համալիրի ծագումը դեռ կարելի է որոշել միայն ընդհանուր գծերով: Անկասկած է մի շարք զագրոսյան ավանդույթների առկայությունը: Դրա հետ մեկտեղ խեցեղենի ձևերում և նախշում նկատելի են զուգահեռներ Հասունի նյութերի հետ: Շատ հավանական է, որ մերձուրմիայի վաղերկրագործների մշակույթի պատկերի վրա եղել է հասունյան տիպի մշակույթի ազդեցությունը: Հավանաբար այդ մշակույթը կրող ցեղերը տարածվելով հասել են Իրանի հյուսիսարևմտյան շրջանները և համագործակցել են տեղի բնակչության հետ:

Հետաքրքիր է, որ Հաջի-Ֆիրուզի ստորին շերտերում գտնվել է այնպիսի իր, ինչպիսին է «թեփի համար սկուտեղը», որը հանդիսանում է հասունյան տիպի մշակույթի հատկանշական գիծը:

Արդեն մ.թ.ա. VI հազարամյակում, կամ համենայն դեպս նրա II կեսում վաղերկրագործական համայնքները արդեն յուրացրել էին տարածքներ, որոնք բավականին հետու էին լեռնային հովիտներից ու նախալեռներից, որոնց հետ կապված են երկրագործության ակունքները: Այս մասին է վկայում Սիալկ I մշակույթը, որի հուշարձանները տարածված են Իրանական սարահարթի կենտրոնում Կազվին-Թեհրան-Քաշան եռանկյունում: Այստեղ չոր անապատների մերձարևադարձային կլիմայի պայմաններում հեղեղվող ռեժիմի փոքրիկ գետերը հնարավորություն էին տալիս արհեստական ոռոգման միջոցով աճեցնել սահմանափակ քանակի հացազգիների բերք: Հենց այդպիսի տեղերում էին առաջանում վաղերկրագործական բնակավայրերը, ձևավորվում առաջին օազիսները:

Սիլակ I մշակույթի համար բնորոշ են կավածեփ կացարաններ, կարմիր մակերեսով հարթ խեցեղեն, կարմիր մակերեսի վրա ընդհատվող երկրաչափական մուգ գույնի նախշով գունազարդում, պղնձյա ասեղներ և քորոցներ, հունձքի համար արխայիկ, ոսկրե բռնակներով և կայծքարային ներդիրներով ուղիղ դանակներ: Սիլակ բնակավայրը փոքր է և գրավում է 3 հա (Girshman, 1938-1939):

12-մետրանոց մշակութային շերտը վկայում է այս մշակույթի երկարաժամկետ գոյությունն առանց էական փոփոխությունների: Այս միապաղաղ կայունությունը բնորոշ է վաղերկրագործական մշակույթներին, հատկապես դրանց զարգացման սկզբնական փուլում: Կծկված դիրքով առատորեն շաղ տված օք-

բայով թաղումները մտցնում են Սիալկ հուշարձանների լայն շրջան, որոնք ունեն նման թաղման ծես: Երեխաներին երբեմն թաղում էին անոթներում, որը հիշեցնում է հասունյան մշակույթի ժամանակաշրջանի Միջագետքում ձևավորված ավանդույթները: Բացի այսպիսի ընդհանուր նմանությունից, մի շարք մշակութային տարրեր թույլ են տալիս ենթադրել գենետիկ կապ զագրոսյան մշակութային ընդհանրության հետ:

Կարմիր անգոբապատ անզարդ անոթները մոտ են Գուրանի նմանատիպ խեցեղենին: Դրա հետ մեկտեղ գունազարդ խեցեղենի շատ հորինվածքներ՝ ուսումնասիրված հարավային Թուրքմենստանում, վկայում են ջեյթունյան նեոլիթի_մշակույթի կապի մասին և ներկայացված են նաև Իրանի հյուսիս-արևելքում: Քարե ապարանջանները ցույց են տալիս կապը Ջարմոյի մշակույթի հետ: Այս տարրերը ցույց են տալիս էլ ավելի արխայիկ հատկանիշներ:

Այդպիսիք են հունձքի համար նախատեսված կայծքարային ներդիրներով ուղիղ դանակները, որոնք ծագում են մեզոլիթյան Նաթուֆի ավանդույթներից, մինչդեռ Ջարմոյում առկա է ավելի զարգացած կոր մանգաղի ձևը: Ուշադրություն է գրավում պղնձյա իրերի շատ վաղ կիրառումը արդեն Սիալկ I շերտում: Այստեղ գտնվել է կոփման միջոցով պատրաստված պղնձյա քորոց: Գտնվել են նաև պղնձյա մախաթներ ու ասեղներ: Հավանաբար մետաղագործության զարգացումը խթանվել է Իրանական սարահարթում պղնձի հանքերի գոյությամբ (ամենամոտը գտնվում է Սիալկից 220 կմ հեռավորության վրա) և գիտնականների կարծիքով պղինձ են մատակարարել Միջագետքի հնագույն մշակույթներին: Փոցխերի քարե գլխիկները, ինչպիսիք եղել են Հասունում և Թեփե Սաբզում, ցույց են տալիս հողի մշակման ձևերը, ենթադրվում է նաև արհեստական լճակների և ոչ մեծ ջրանցքների կառուցումը, առանց ինչի կանոնավոր երկրագործությունը այս շրջաններում չափազանց դժվար կլիներ: Սիալկ I տիպի համալիրների գոյությունը հավանաբար ընդգրկում է մ.թ.ա. VI հազարամյակի մեծ մասը մինչև մ.թ.ա. V հազարամյակ: Նման նյութ է գտնվել կենտրոնական Իրանի մի շարք այլ հուշարձաններում, մասնավորապես Ջեշմե-Ալիում:

Հաջորդ՝ Սիալկ II համալիրը նեկայացնում է Սիալկի տիպի մշակույթի զարգացման ավարտական փուլը: Համապատասխան մշակութային շերտերը կազմում են 7մ: Պղնձյա իրերն այդ ժամանակ դառնում են ավելի տարածված: Բացի արդեն հայտնի քորոցներից, մախաթներից ու ասեղներից, գտնվել է կոթունավոր տեգի, կամ նիզակի գլխիկի մի տափակ մաս: Սակայն ոչ մի իրի մասին դեռ չի կարելի ասել, որ դրանք պատրաստվել են ձուլման միջոցով: Մեր առջև իրեր են, որոնք պատրաստվել են բացառապես կոփման միջոցով: Սիալկ II ժամանակ անհետանում են հունձքի դանակների ոսկրե հիմքերը, թեև կայծ-

քարային ներդիրները, որոնք հավանաբար պատկանում են մանգաղներին, դեռ հանդիպում են։ Հավանաբար ոսկրե շրջանակները փոխարինվել են փայտով, որոնք հազվադեպ են պահպանվել, բայց չի կարելի բացառել նաև պղնձյա մանգաղների պատրաստման հնարավորությունը։ Սիալկ II ժամանակ կայծքարի իրերից բացի կիրառում էին նաև քարաթերթից շաղափներ, որոնք հավանաբար օգտագործվել են քարե իրեր պատրաստելու՝ ծակելու համար։ Վերջիններից կարելի է նշել համեմատաբար հազվադեպ հանդիպող քարե անոթներ, քարե ապարանջաններ, որոնք ցույց են տալիս Զարմոյի մշակութային ավանդույթների ավարտը և դիորիտից, սարդիոնից ու փիրուզից բազմապիսի ուլունքներ։ Փիրուզի առկայությունը հավանաբար վկայում է, որ կապ է եղել Խորասանի շրջանի հետ, Նիշապուրի շրջանում գտնվում է այս կիսաթանկարժեք քարի ամենամեծ հանքը։

Վզնոցների համար խխունջներ բերվում էին Իրանի այլ մասից՝ Պարսից ծոցի ափերից, իսկ հյուսիսային Աֆղանստանի կապերի մասին վկայում է լազուրիտից գնդիկը։ Նախորդ ժամանակաշրջանի համեմատ Սիալկ II կատարելագործվում են խեցեղեն անոթները։ Տարածում են ստանում կոնաձև հատակներով թասերը։ Զարդանախշում գերակայում են երկրաչափական մոտիվները հատկապես՝ շեղագծով պատված նախշերը։ Անոթները զարդարող նախշերի մեջ առաջին անգամ հայտնվում են շեղագծով պատված այծերի պատկերներ։ Բացի այծերից, նեկայացված են թռչունների գծա-սխեմատիկ պատկերներ։ Այդպիսին են կենտրոնական Իրանի վաղերկրագործական համայնքների մշակութատնտեսական էվոլյուցիայի սկզբնական փուլերը։

Դատելով գունազարդ խեցեղենի տիպերից՝ հատուկ խումբ էին կազմում այն ցեղերը, որոնք բնակվում էին արևմտյան Զագրոսի հովիտներում, նրա հավանաբար Գուրանի տիպի մշակույթի կրողների հետնորդներն էին։ Այս շրջանի միակ համեմատաբար ամբողջական ուսումնասիրված հուշարձանը Զիյանն է, բայց այստեղ էլ հնագույն շերտերի ստրատիգրաֆիան բավականին ամորֆ է և անհաստատ շինարարական համալիրների բացակայության պատճառով (Conteneu, Ghirshman, 1935)։ Շերտերը, որոնք համապատասխանում են Սիալկ I և Սիալկ II համալիրների ժամանակաշրջանին Զիյանում հասնում է 5 մ (Զիյան V A – V B)։ Այստեղ կան կավածեփ պատերի հետքեր, որոնք կառուցվել են քարե հիմքի վրա, ինչպես սովորաբար անում էին լեռնային շրջաններում։ Գտնվել են կայծքարից և վանակատից իրեր։ Զիյան V B շերտում գտնվել են կտրվածքում քառանկյուն պղնձյա քորոցներ։ Ձեռածեփ անոթները, ինչպես և Սիալկում, բնութագրվում են կավին կոպիտ կտրտված հարդի խառնուրդով։ Պատկերները միագույն են, բայց մոտիվները ընդհանուր առմամբ տարբերվում են Սիալկի

նախշերից։ Մասնավորապես արդեն Ջիյան V A շերտում հանդիպում է մալթյան խաչը։ Այս շերտի խեցեղենի որոշ զարդանախշեր կարելի է մեկնաբանել որպես մարդկանց և թռիչքի մեջ թռչունների սխեմատիկ պատկերներ։ Ջիյան V B շերտում անոթների նախշերում հայտնվում են այծերի և թռչունների պատկերներ, բայց ի տարբերություն Սիալկի այծերի, մարմինները պատկերվում են լցված ուրվագծերով։ Ջիյան V տիպի խեցեղենը նկատվում է արևմտյան Զագրոսի մի շարք հնագույն բնակավայրերում (Goff, 1971)։

Այսպիսով, վաղերկրագործական համալիրների տարածումը, որն արտահայտվում է տարբեր տեղական ձևերով, մ.թ.ա. VI հազարամյակում Իրանում հաստատեց նոր կենսակերպ՝ հատկանշական էտալոններով ու ստանդարտներով։ Հատկապես նկատելի փոփոխություններ տեղի ունեցան կյանքի ապահովման համակարգում, երբ սկզբունքորեն նոր երևույթ էր դարձել բարեկարգ կացարանների առկայությունը, սննդում բուսական մթերքի լայն օգտագործումը, որը բերեց կավանոթների լայն տեսականու ստեղծմանը, հագուստի նկատմամբ ընդգծված ուշադրությունը, որի մասին մենք կարող ենք դատել միայն զարդերից, որոնք կրում էին առանձին, կամ կախում էին հագուստից։ Մի շարք ոլորտներում ձևավորվում է սննդի արտադրության համար այնպիսի արդյունավետ համակարգ, ինչպիսին է ոռոգվող երկրագործությունը իր սկզբնական ձևերում։ Արդյունքում հասարակության մեջ ստեղծվում է նշանակալի տնտեսական, մշակութային և մտավոր պոտենցիալ։

Զարգացման նախադրյալները ակտիվորեն իրագործվում են Իրանի վաղերկրագործական համայնքների հետագա էվոլյուցիայի ընթացքում։ Այսպես՝ ավելի ու ավելի պարզորոշ էր նկատվում մասնագիտացված արտադրությունների զարգացումը, որը վերածվում էր ինքնուրույն արհեստների։ Այս գործընթացը լավ երևում է կենտրոնական Իրանի վաղերկրագործական օջախներից մեկի՝ Սիալկի պեղումներից։ Սիալկ III համալիրը, որը թվագրվում է մ.թ.ա. IV հազարամյակով, բնութագրվում է նոր մշակույթով, որը թեև ձևավորվել է Սիալկ II ավանդույթների հիման վրա, այնուհանդերձ շատ հարցերում տարբերվում է այս համալիրից։ Դրա հատկանիշներն են՝ տարբեր կենդանակերպ մոտիվներով (այդ թվում նաև բծավոր հովազներով) դուրգի վրա պատրաստված գունազարդ խեցեղենը, պղնձից ձուլված հարթ դաշույնները, ուրագները, ականջավոր փոցխերը, քարե կոճականման կնիքները։

Սիալկ III բնակավայրը գրավում է մոտ 3,5 հա։ Իսլամաբադի, Զեշմե-Ալիի և Մուրտեզագիրիդի նյութերը, Ռեայի շրջանում ցույց են տալիս, որ թեհրանյան օազիսը շարունակում է ծաղկել։ Դամգանա շրջանում հայտնվում է Թեփե-Գիսար բնակավայրը, որտեղ հնագույն շերտերը (Գիսար I A) համաժամանա-

կյա են Սիալկ III։ Սիալկ III բնակավայրը բաղկացած էր բազմասենյականոց կացարաններից՝ կառուցված հում աղյուսից, ուղղանկյուն (38X18X10 սմ, 41X22X10 սմ), կամ քառակուսի (30X30X10 սմ) չափսի։ Այս կացարանները բաժանվում էին նեղ փողոցներով։ Երբեմն կացարանի պատերը ներսից ներկված էին կարմիր։ Ժամանակին այս բնակավայրի բնակիչները ականատես են եղել ողբերգական իրադարձությունների։ Կացարաններից մեկի հատակին մի կույտ հում աղյուսների տակ բացվել է ձեռքերով երկու երեխաներին ծածկած կնոջ կմախք։ Նույն կացարանում գտնվել է հասուն տղամարդու կմախք։ Տղամարդուն ճզմել էր վերևից ընկած պատը։ Հավանաբար իրավացի է Ռ. Գիրշմանը, ենթադրելով, որ տվյալ դեպքում մենք գործ ունենք բնական աղետի՝ երկրաշարժի հետ։ Գտնվել են նաև մարդկանց կմախքներ, որոնց ցեղակիցները կարողացել են թաղել համաձայն իրենց ծիսակարգի։ Թաղման ձևը պարզորոշ ցույց է տալիս կապը նախորդ ավանդույթների հետ՝ հանգուցյալները թաղված են կծկված աջ, կամ ձախ կողքի և որոշ ժամանակաշրջանում (Սիալկ III 1-3) գանգերի վրա դեռ հանդիպում են կարմիր ներկի հետքեր։

Ավանդույթների պահպանումը կարելի է նկատել նաև խեցեղենում, բայց դրա տեխնոլոգիայում տեղի են ունենում էական փոփոխություններ։ Խեցեղենը թրծված է հատուկ հնոցներում, որոնք ունեն բարդ երկհարկ կառուցվածք։ Բացի դրանից Սիալկ III խեցեղենը պատրաստվում է դուրգի վրա։ Լայն տարածում են ստանում տակդիրներով գնդանման անոթները, սկահակներ, նրբագեղ գավաթներ։ Հատկանշական է, որ ի տարբերություն ուրուկյան Շումերի, որտեղ արհեստների տարածումը կործանիչ էր գեղարվեստական վարպետության համար, այստեղ անոթների վրա գունազարդումը չի անհետանում։ Սիալկ III գունազարդ խեցեղենը աչքի է ընկնում վառ, յուրահատուկ ոճով։ Երկրաչափական նախշերի հետ մեկտեղ լայն տարածում են ստանում այծերի, թռչունների, օձերի, ձիերի, ցուլերի, հովազների և մարդկանց պատկերները։ Երբեմն հանդիպում են մի շարք կերպարներով տեսարաններ, որոնք հավանաբար ինչ-որ դիցաբանական սյուժեի պատկերներ են։ Կենդանիների պատկերները, որպես կանոն, տրվում էին ուրվագծով։ Սա չէր խանգարում վարպետներին հասնել նկատելի արտահայտչականության (վազող թռչուններ, գլուխները իջեցրած լեռնային այծեր)։ Բացի խեցեղենի արտադրությունից, նկատելիորեն առաջադիմում է նաև մետաղագործությունը։ Բանը միայն այն չէ, որ վաղ նեոլիթի հետ համեմատած մեծացել էր պղնձյա իրերի թիվը, այլև նկատելիորեն մեծացել էր դրանց տեսականին։ Կոփման հետ մեկտեղ հայտնի է դառնում նաև ձուլումը։ Փակ կաղապարներում ձուլվում էին լայնակի շեղբով կացիններ, տապարներ, դաշույններ։ Կան նաև ծակիչներ, ասեղներ, քորոցներ և նույնիսկ փոքրիկ ար-

ծաթյա ճարմանդ։ Ինչպես և դուրգի օգտագործումը, առաջին ձուլածո իրերը կապված են Սիալկ III շերտի հետ, որը վկայում է, որ այս ժամանակ սկսում է զարգանալ մասնագիտացման գործընթացը։

Վերջապես երրորդ երևույթը, որ նկատվում է Սիալկ III շրջանում նույնպես, ամենայն հավանականությամբ, կապված էր տնտեսության և հասարակության մեջ այդ ժամանակ տեղի ունեցող փոփոխությունների հետ։ Հայտնվում են կոճականման պարզ երկրաչափական պատկերներով կնիքները։ Դամբարաններից մեկում գտնված այդպիսի մի կնիք հավանաբար վկայում է այն մասին, որ դրանք կիրառվում էին որպես հմայիլներ, իսկ կավի վրա դաջվածքը ցույց է տալիս, որ նման իրերը ծառայել են որպես կնիք։ Կնիք - հմայիլը ժամանակի ընթացքում լայնացնում է իր իմաստային նշանակությունը՝ դառնալով սեփականության խորհրդանիշներից մեկը։ Այս իրերի յուրահատուկ վարկանիշային սեմանտիկան փաստվում է դամբարաններում դրանց առկայությամբ ու խեցեղենի և պղնձյա իրերի համեմատական հարստությամբ։ Այդպիսին են, մասնավորապես, Սիալկ III, 5 շերտի գերեզմանները։

Առաջադիմական փոփոխությունները, որոնք այդպես պարզորոշ են Սիալկի նյութերում, նկատվում են նաև կենտրոնական Իրանի այլ վաղերկրագործական բնակավայրերում, օրինակ Թեփե-Հիսարում, Դամգարի մոտ (Schmidt, 1933, 1937)։ Թեփե -Հիսարը փոքր, մոտ 2հա տարածքով բնակավայր է, որը հիմնվել է հենց դիտարկվող ժամանակաշրջանում։ Հիսար I A շերտում դեռ հանդիպում է ձեռածեփ խեցեղենը, մինչդեռ սկսած Հիսար I B շերտից խեցեղենը պատրաստվում է դուրգի վրա։ Անոթների ձևերը և պատկերները, որոնց մեջ հարկ է նշել այծեր, թռչուններ և հովազներ, ստեղծում են Սիալկի խեցեղենի ծաղկող արտադրության գավառական տարբերակը։ Համեմատաբար բազմաթիվ են նաև պղնձյա իրերը՝ դաշույնները, նիզակի գլխիկները, ուրագները, ասեղները, մատանիները, քորոցները և մախաթներ։ Դրանց մի մասը հավանաբար ձուլվել են հատուկ կաղապարներում։ Բնութագրական են նաև կնիքները, որոնք պատրաստվում էին գիպսից և կրաքարից։ Հանգուցյալներին թաղում էին հենց բնակավայրի տարածքում՝ փոսերում կծկված դիրքով։ Որպես թաղման գույք, բացի անձնական օգտագործման իրերից, ապարանջաններից և ուլունքներից, դրվում էր նաև 2-3 անոթ։

Կենտրոնական Իրանի վաղերկրագործական օջախում տեղի ունեցող փոփոխությունները մեկնաբանվում են տարբեր ձևով։ Նույնիսկ ենթադրություն կա, որ Սիալկ III շրջանում եկել են նոր բնակիչներ, որոնք հիմնել են նոր բնակավայր։ Սակայն ավելի ճիշտ է խոսել մի շարք էական նորամուծությունների երևան գալու մասին տեխնոլոգիայի ասպարեզում՝ նախ և առաջ դուրգի կիրա-

ռումը, որը հայտնվում է կենտրոնական Իրանում գրեթե նույն ժամանակ ինչ Միջագետքում: Այս նորամուծությունները, ինչպես նաև մինչ այդ բացակայող կոճականման կնիքների հայտնվելը կենտրոնական Իրանում կարող էր տեղի ունենալ կապերի և փոխազդեցությունների ուժեղացման արդյունքում՝ Ուբեյդյան մշակույթի ակտիվ տարածման ժամանակաշրջանում: Սակայն առավել մասսայական նյութը՝ գունազարդ խեցեղենը, որն անմիջապես արձագանքում է տարբեր տեսակի մշակութային փոփոխություններին, քիչ նմանություն ունի միջագետքյան համալիրների հետ, և Սիալկ III մշակույթը պետք է դիտարկել որպես տեղական կենտրոնական իրանյան երևույթ: Տեխնոլոգիական առաջխաղացումը, որը դիտվում է Սիալկ III ժամանակ, անտարակույս բերում էր արհեստավարժ վարպետների հետագա մասնագիտացման, և վարպետները զբաղվում էին միայն իրենց ընտրած մասնագիտություններով: Լինելով այդ հասարակության անդամ նրանք իրենց արտադրանքով բավարարում էին հասարակության՝ պահանջները: Այս տիպի արհեստը, լինելով սոցիալական տեսանկյունից արխայիկ, հաճախ տեխնիկապես կատարյալ էր և մասնագիտական գրականության մեջ կոչվում է համայնքային:

Ուբեյդյան ազդեցությունը ավելի զգալի է մերձուրմիայի շրջանում: Փիշդելի-թեփե համալիրի գունազարդ խեցեղենում նկատվում է Ուբեյդի ուժեղ ազդեցություն:

Ձեռքով ծեփված անոթները զարդարվում էին մուգ դարչնագույնով բաց կարմիր, կամ կաթնագույն ֆոնի վրա: Գերակայում է պարզ երկրաչափական պատկերը, բայց հանդիպում են նաև երկրաչափական ձևով արված կենդանիների պատկերներ: Այդպիսի գունազարդման մի շարք զուգահեռներ կան Գիյանի շերտերում, բայց ամենամոտը զարդանախշի առումով հյուսիսային Ուբեյդն է, որը հայտնի է Գավրայի պեղումներից (Գավրա XIX-XVI):

Մետաղագործության զարգացման մասին վկայում է պղնձյա կացինը:

Արտադրության մասնագիտացման նույն գծերը կարելի է տեսնել նաև Իրանի այլ վաղերկրագործական օջախներում, որոնք գտնվում են Ֆարսայում: Այստեղ էտալոնային հուշարձան է մ.թ.ա. IV հազարամյակի Թալի-Բակուն Ա Շիրազի մոտ (Langsdorff, Mac Cown, 1942): Դրանք ոչ մեծ բնակատեղիներ են, որոնց մասին լավագույն պատկերացումը տալիս է Թալի-Բակունը, միակ բնակատեղին որտեղ կատարվել են բավականին մանրակրկիտ պեղումներ:

Թալի-Բակուն Ա բլուրը գրավում է մոտ 2 հա տարածք և բաղկացած է մեծ բազմասենյականոց կացարաններից (պահպանվել են միայն ավերակները), որոնք առանձնանում են նեղլիկ փողոցներով: Սենյակներում տեղ-տեղ պահպանվել են անվնաս անոթներ, ծածկված քարով կամ խեցու կտորով: Այդպիսի

անոթներից մեկում հավանաբար պահվել է ինչ-որ ձկնային սնունդ, մյուսներում գտնվել են կենդանիների ոսկորներ, կամ փափկամորթերի խեցիներ։

Հում աղյուսից շինություններ են պեղվել նաև Թալի-Գապ բնակավայրի վերջին շերտերում, որոնք համաժամանակյա են Թալի-Բակուն Ա հետ։ Այստեղ աչքի է ընկնում ուղղանկյուն օջախով մի խոշոր սենյակ, հավանաբար սրբատեղին։ Մշակութային շերտում գտնվել են թաղումներ, որտեղ կմախքները կծկված, կամ գրեթե լրիվ ձգված դիրքով են։

Կավանոթները պատրաստված են առանց դուրգի օգնության, սակայն աչքի են ընկնում բարձր որակով։ Թալի-Բակունում գտնվել են նաև կավի թրծման համար վառարաններ։ Դրանք փոքր երկհարկ հնոցներ են։ Թալի-Բակունի գունազարդ խեցեղենը ներկայացնում է հնագույն խեցեգործության արվեստի առավել աչքի ընկնող գործեր։ Այս արվեստի դեկորատիվ ուղղվածությունը ազդել է կենդանիների պատկերների մեկնաբանության վրա, որն այդ ժամանակ, ինչպես Սիալկում, շատ ընդունված էր տեղական վարպետների կողմից։ Օրինակ, սպիրալաձև կլորացող կոտոշներով այծերը ընկալվում էին ոչ թե որպես կոնկրետ պատկեր, այլ ինչպես ճոխ հորինվածքի զարդանախշ։ Մաքուր երկրաչափական զարդանախշը ընկալվում է որպես կենդանակերպ պատկերների առանձին տարր, այդ թվում նաև կոտոշների հավելումով։ Ավելի հազվադեպ են հանդիպում ցուլերի, բծավոր հովազների, ձկների և գազանների պատկերներ։_Մարդակերպ պատկերները խիստ հազվադեպ են և, հավանաբար, կապված են մոգական խորհրդանիշների հետ։ Նույն կենդանիներին (մասնավորապես եղջերավոր) կարելի է տեսնել կավե արձանիկների հավաքածուում։ Փոքր արձանիկների մեջ կարելի է առանձնացնել առյուծների, հովազների, թռչունների և շների արձանիկները։ Գտնվել են ուղիղ ուսերով, կարմիր ներկով ներկված մոգական սվաստիկայի նշաններով կանացի արձանիկներ։

Սիալկ III մշակույթի նմանությունը երևում է կնիքների տարածմամբ և կավի վրա դրանց դաջվածքով։ Դրանք բոլորն ունեն պարզ երկրաչափական նախշ։ Կավե կնիքների մեջ կա մի հետաքրքիր նմուշ, որն ունի երկու տարբեր դաջվածք։ Կան դաջվածքներ նաև կավե գնդիկների վրա, որոնք գիտնականները համարում են խցան, կամ անոթների փականներ։

Զարմանալի է Թալի-Բակունի նյութում պղնձյա իրերի բացակայությունը։ Գտնվել են քարե հավանգներ, սանդեր, ուլունքներ, երկկոն կավե ճախարակներ և կավե գնդեր պարսատիկի համար՝ այդ ժամանակաշրջանի համար նյութերի սովորական հավաքածու։ Ինչ վերաբերում է պղնձյա իրերի բացակայությանը, այն մասամբ բացատրվում է Շիրազի շրջանում պղնձյա հանքի բացակայությամբ։

Պղնձյա քորոցների օգտագործման կողմնակի ապացույց է ոսկրե քորոցների բացակայությունը: Քամալաբադի մոտ գտնվող Թալի-Ռիգի շերտում, որը համապատասխանում է Թալի Բակունին, գտնվել է պղնձյա կելտ տիպի կացնի մաս: Հավանաբար Բակուն Ա. IV շերտին է պատկանում հենց Թալի-Բակունի պատահականորեն գտնված պղնձյա դաշույնը: Հարկ է խոսել ոչ թե պղնձի բացակայության, այլ, այս մետաղի խիստ հազվադեպ լինելու մասին թալի-բակունյան ցեղախմբերի մոտ: Թալի-Բակունում գտնված լազուրիտի ուլունքները վկայում են ամենայն հավանականությամբ բազմաստիճան փոխանակման, ծայրամասային Առաջավոր Ասիայի վաղերկրագործական մշակույթի հետ կապերի հաստատման մասին (Majidzadeh, 1982):

Իրանի վաղերկրագործական մշակույթների օջախների ներքին մշակութային և տնտեսական էվոլյուցիան Խուզիստանում բերեց նշանակալի փոփոխությունների, որը հնում կոչվում էր Էլամ, իսկ հետո անտիկ հեղինակների մոտ Սուզիանա: Հենց այստեղ է ակնառու հասարակական զարգացման տեմպի արագացումը և արդեն մ.թ.ա. IV հազարամյակում տեղի է ունենում տեղական քաղաքակրթության մշակութային և տնտեսական հիմքերի ձևավորում: Ըստ ամենայնի ընդհանուր զարգացմանը օժանդակել է ոռոգվող երկրագործության արդյունավետությունը Քարունի և Կերկե գետերի հովիտներում, որտեղ խոշոր ոռոգման համակարգերը ստեղծվել են գրեթե նույն ժամանակ ինչ հարավային Միջագետքում: Կարելի է ասել, որ Խուզիստանի նստակյաց համայնքները կրկնում են Միջագետքի զարգացման ուղին, միևնույն ժամանակ օգտագործելով հարևան Շումերում ստեղծված մի շարք մշակութային մոդելներն և էտալոնները: Այս գործընթացը առավել վառ է արտահայտվում մ.թ.ա. IV հազարամյակում, երբ սկսած Սուզա I-ից Ժ. դե Մորգանի ժամանակագրությամբ, կամ Սուզա Ա նոր տերմինաբանությամբ նկատվում է տեղական մշակույթի բազմակողմանի առաջխաղացում: Նախորդ համալիրները, որոնց գոյությունը մեծմասամբ վերաբերում է մ.թ.ա. V հազարամյակին 50-ական թվականների սխեմայով, բուն Խուզիստանի համար (Breton, 1947, 1957) ստացել են Ջովի (Սուզիանա Բ) և Բենդեբել (Սուզիանա Գ) անվանումները: Դեհ Լուրանի դաշտավայրի մոտ համալիրները, որոնք ուսումնասիրվում էին ամերիկյան արշավախմբի կողմից, կոչվել են Խազինե և Մեխմե:

Խազինե-Ջովի համալիրների գոյության ժամանակ ավարտվում է տարածքի յուրացումը: Այդ ժամանակ Դեհ Լուրանում կար 12 բնակավայր, իսկ բուն Սուզիանայում՝ 100: Բնակչության այսպիսի թռիչքային աճը առաջին հերթին պայմանավորված է այստեղ կազմավորված սննդամթերքի արտադրության բարձր արդյունավետությամբ:

Փոքր բնակավայրերի կողքին գոյություն ունեն նաև խոշոր կենտրոններ, ինչպես օրինակ Մուսիյանը և Զոգա-Միշը։ Դա վկայում է ոչ միայն բնակչության աճի, այլև նրա խտության աճի մասին։ Խազինեի համար բնորոշ է կարմիր կոպիտ խեցեղենը, որտեղ կավին խառնել են խոշոր կտրտած հարդ, ինչպես նաև լավ թրծված նրբագեղ անոթները (դեղնագազարագույն մակերեսին սև զարդանախշով), որոնց երկրաչափական պատկերները, որոշ առումով մոտ են միջագետքյան Հաջի Մուհամմադ համալիրին։

Գովիի համալիրում հայտնի են բազմաթիվ քարե գործիքներ, այդ թվում նաև ուրագներ և փոցխեր, որոնցից մեկի վրա մնացել են բիտումի հետքեր, որով նրանք ամրացվել են փայտե կամ ոսկորե կոթին։ Բավականին մեծաթիվ են անիվավոր պատկերներով զարդարված կավե ճախարակները։ Գովիից են նաև ցուլերի, այծերի և խոյերի փոքր կավե արձանիկները, որոնք հաճախ զարդարված են ուղղահայաց գծերով։ Կան նաև կանացի արձանիկների հատվածներ։ Նշանակալի առաջխաղացում է նկատվում կավանոթներում։ Լավանում է խեցեղենի որակը, իսկ միագույն, պարզ երկրաչափական զարդերի կողքին հայտնվում են կենդանիների, այդ թվում այծերի, գծային պատկերներ։ Հարկ է նշել, ձեռքում աղեղ պահած կանգնած տղամարդու պատկերը։ Չնայած աղեղի առկայությանը պեղումների ժամանակ կայծքարե նետասլաքներ չեն գտնվել։ Այսպիսով, Գովիի համալիրում այդ երևույթները կարծես թե նախապատրաստում էին Սուզա Ա-ի ժամանակի փայլուն վերելքը։ Սակայն դեռ հազվադեպ են հանդիպում կոճականման կնիքները (այս իրերին կարելի է վերագրել միայն բիտումի մի փոքր կտոր, գտնված Գովի բնակավայրի մակերեսին)։

Մեխմե տիպի համալիրներում ներկայացվում է նոր տիպի գունազարդ խեցեղեն, որն արվում էր կարմիր մակերեսին մուգ կարմիր գույնով։ Բարդանում է նաև պատկերների թեման. հայտնվում են իրար հետևից քայլող այծեր, ձեռք-ձեռքի տված պարող մարդկանց պատկերներ։ Գտնվել են նաև պղնձյա քորոցներ։ Հարևան Լուրիստանում պեղված է նույն ժամանակաշրջանի դամբարանադաշտ, որտեղ թաղումները քարարկղերում էին, ծածկված ծանր սալերով։

Կան նաև խմբակային թաղումներ։ Թաղումների գույքում, բացի գունազարդ խեցեղենից, կան նաև կնիքներ, զենք՝ քարե գուրզեր և ռազմական կացիններ, որոնց վրա փորված անցք կա։

Սուզիանայի տարածքում Բենդեբալում և Թեփե-Բուխալլանում պեղվել են բազմազան գունազարդ կենդանակերպ մոտիվներով խեցեղեն և կոճականման կնիքներ։

Զարգացման այս ճյուղը ավարտվում է Սուզա I, կամ Սուզա Ա, որով գրեթե հարյուր տարի առաջ, ըստ էության, սկսվել էր Առաջավոր Ասիայի նախնադա-

ության հնագիտության ուսումնասիրությունը: Այս համալիրին բնորոշ են գունազարդ խեցեղենը (դեղնա-գազարագույն մակերեսին մուգ դարչնագույնով արված իրար ետևից գնացող կենդանիների պատկերներ. այծեր, շներ և թռչուններ), կոճականման կնիքները՝ երկրաչափական և ավելի բարդ պատկերներով, որոնցում կենդանիներ և, երբեմն, մարդիկ կան, տափակ պղնձյա ուրագները, կացինները, կլոր հայելիները, որոնք պատրաստված են փակ կաղապարներում ձուլման միջոցով:

Այդ շրջանի խոշոր կենտրոն է Սուզան: Շերտեր են գտնվել երկու խոշոր բնակավայրերի՝ այսպես կոչված Ակրոպոլիսի և Ապադանայի տարածքում, որոնք հնարավորություն են տալիս որոշել բնակավայրի տարածքի երկարությունը՝ 300մ: Առաջին բնակիչները բնակավայրի համար օգտագործում էին բնական բարձունքները, մինչև 9մ բարձրությամբ և հիմք կա ենթադրելու, որ բլրի ստորոտին կառուցել էին կավե պարիսպ: Նոր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ամենայն հավանականությամբ եղել է մի հզոր հարթակ, որը ձգվում է 80մ և ներկայացնում է մոնումենտալ ճարտարապետության զարգացման սկզբնական փուլը (Canal, 1978; Amiet, 1986): Բնակավայրի ծայրամասում գտնվում էր դամբարանադաշտը, որը պեղվել է Ժ. Դե Մորգանի կողմից՝ առանց պահանջվող մանրակրկիտության և փաստավորման: Որքան կարելի է դատել եղած տվյալներից, հանգուցյալները դրվել են գերեզման ձգված, կամ թույլ կծկված դիրքով: Սովորաբար նրանց հետ դրվել են բավականին շատ գունազարդ կավանոթներ և պղնձյա իրեր՝ ուրագներ տղամարդկանց թաղումներում և հայելիներ կանանց հետ: Ավելի ուշ բուն բնակավայրի տարածքում, որտեղ համապատասխան շերտերը հասնում են 2-3 մ պեղվել են թաղումներ, բայց բացառապես մանկական: Նրանց հետ սովորաբար դնում էին երկու անոթ, կնիք-հմայիլ և կավե ճախարակ, երբեմն անիվի տեսքով:

Ինչպես Սիալկ III և Սուզա A համալիրում առկա է տեխնիկական առաջընթաց խեցեգործության և մետաղամշակման մեջ: Կավանոթները թրծվում էին հատուկ վառարաններում, որոնց մասերը գտնվել են մի շարք հնագույն բնակավայրերում: Այդ ժամանակ բարակ պատերով, նրբագեղ անոթները պատրաստվում էին ձեռքով: Սակայն ինչ-որ դեպքերում կարելի է խոսել դանդաղ պտտվող դուրգի օգտագործման մասին: Սուզայի գունազարդ խեցեղենը խեցեգործական արտադրանքի միայի մի մասն է: Առավել տարածված էին հարթ կարմիր անոթները, մինչդեռ շքեղ անոթները, դրանց թվում նաև այն անոթները, որոնք դրվում էին դամբարաններում, ծածկված էին միագույն պատկերներով: Այստեղ, ինչպես Իրանի այլ շրջանների համաժամանակյա բնակավայրե-

րում, երկրաչափական մոտիվների հետ մեկտեղ լայն տարածում ունեին կենդանիների բավականին սխեմատիկ, պայմանական պատկերներ։

Սուզիանայի խեցեղենի գունազարդումը աչքի է ընկնում նրբագեղությամբ և ռիթմի ու հորինվածքի մեծ զգացումով։ Շատ բնորոշ են խիզախորեն վեր ցցված կոտոշներով այծերի պատկերները։ Կան նաև գետնին կպած, կարծես վազքի մեջ շներ, թասերի ներսի մասում շրջանաձև դասավորված թռչող թռչուններ՝ հավանաբար անընդմեջ շարժումը ցույց տալու միտումով։ Հանդիպում են նաև տարբեր տեսակի քայլող, կամ կանգնած թռչուններ, ձկներ, երբեմն ձեռքում աղեղ բռնած մարդիկ։

Պղնձյա իրերը, որոնք գտնվել են թաղման գույքում, ինչպես նաև անմիջականորեն մշակութային շերտում, վկայում են այն մասին, որ դրանք լայն կիրառում ունեին կենցաղում։ Դրանք տափակ կացիններ են, ուրագներ, մախաթներ, ասեղներ, մինչև 19 սմ. շառավղով հայելիներ։ Սակայն պարզ չէ, արդյոք դրանք պատրաստվել են հատուկ կաղապարներում ձուլման միջոցով, ինչ մենք տեսնում ենք Սիալկի նյութերում։ Քիմիական անալիզը ցույց տվեց, որ պղնձի հանքերը գտնվում էին կենտրոնական Իրանում, Անարակի շրջանում, Սիալկից 300 կմ հարավ-արևելք, որտեղից էլ Սիալկի բնակիչները ստանում էին հանքաքարը (Berthoud, Frangaix, 1980)։

Սուզա Ա. շերտում գտնվել են մեծ թվով կոճականման կնիքներ։ Բացի երկրաչափական պատկերներից, ինչպես և՛ Գիսարի և՛ Սիալկի, և՛, Սուզայի կնիքների վրա մենք տեսնում ենք մարդկանց և կենդանիների, այդ թվում նաև այծերի պատկերներ։ Դամբարաններում գտնված լազուրիտից ուլունքները վկայում են այն մասին, որ բազմաստիճան փոխանակման կապերը տարածվում էին հարյուրավոր կիլոմետրերով։ Բնական է, որ ընդհանուր մշակութային և տնտեսական առաջընթացը խիստ կապված է բնակչության աճի հետ։ Քարուն և Կերեկ գետերի միջև ընկած խիտ բնակեցված տարածքը դառնում է Իրանի կարևորագույն կենտրոն, որտեղ ակտիվորեն ձևավորվում էր քաղաքակրթությունը։ Բուն Սուզան արդեն խոշոր գյուղատնտեսական շրջանի և արհեստների մասնագիտացված արտադրության, այդ թվում նաև մետաղամշակման կենտրոն էր։ Պղնձյա իրերի առատությունը դամբարաններում խիստ հակադրվում է Միջագետքի համաժամանակյա դամբարաններին (Amiet, 1986) և ցույց է տալիս բարեկեցության համեմատական աստիճանը։ Մետաղյա իրերի առկայությունը միայն առանձին դամբարաններում, որոնք կազմում են ուսումնասիրված թաղումների մոտավորապես 5%, թույլ են տալիս եզրակացնել, որ հասարակության մեջ տեղի են ունենում սոցիալական և նյութական դասակարգման պրոցեսներ։ Պ. Ամյեն կարծում է, որ կնքագործության (գլիպտիկա) մեջ անտրոպո-

մորֆ տիրոջ պատկերի հայտնվելը համապատասխանում է հասարակության մեջ առաջին շարք մղված քուրմ-ղեկավարի կերպարին (Amiet, 1986)։ Կուտակված տնտեսական և մշակութային պոտենցիալը դարձավ վստահելի հիմք հետագա զարգացման համար։

Սուզա I համալիրը կարելի է թվագրել մ.թ.ա. V հազարամյակի վերջին քառորդով և մ.թ.ա. IV հազարամյակի առաջին քառորդով (Amiet, 1986, Dyson, 1965)։ Հարավ- արևմտյան Իրանի այս հանգուցային հուշարձանի շերտերի հետագա ժամանակագրությունը երկար ժամանակ հիմնվում էր Լե Բրետոնի սխեմայի վրա (Breton, 1957), ով անվանել էր Սուզա I և II միջև ընկած չուսումնասիրված շրջանները որպես Սուզա B և D ժամանակաշրջաններ, իսկ բուն Սուզա II Ժ. դե Մորգանի սիստեմով կոչել էին Սուզա C։ Այս ժամանակագրության վրա էր հիմնված և պատմական զարգացման ընդհանուր բնութագրությունը, որն առաջարկվել էր նախորդ ընդհանրացված աշխատություններում (Чайлд, 1956, Массон, 1964 б)։

Բուն Սուզայում կատարված հետագա պեղումները, ավելի վաղ կուտակված նյութի մանրակրկիտ անալիզը և այլ հուշարձանների ուսումնասիրությունը, ինչպես Խուզիստանում, այնպես էլ արևելյան շրջաններում (Johnson, 1973; Weiss, 1977; Sumner, 1974, 1976) թույլ տվեցին առաջարկել ավելի ճշտված պատկեր, որը տերմինաբանորեն համապատասխանում էր Ուրուկի և այլ հուշարձանների միջագետքյան սխեմային (Amiet, 1986)։

Այս աշխատանքները համոզիչ կերպով ցույց են տալիս, որ մ.թ.ա. IV հազարամյակի կեսում, այստեղ ակտիվորեն տեղի է ունենում տեղական քաղաքակրթության կազմավորման գործընթաց, որը կիրառում էր հարևան Միջագետքում հաստատված մի շարք ստանդարտներ և էտալոններ։ Այդ ժամանակ գրեթե ամբողջ խեցեղենը պատրաստվում է դուրգի վրա։ Միաժամանակ, ինչպես դա նկատվում է հարավային Միջագետքում, անհայտանում է անոթների գունազարդումը։ Կարմիր գույնի խեցեղենի հետ մեկտեղ հայտնվում է դեղնագորշ խեցեղենը, իր որակով նման Շումերի ուրուկյան խեցեղենին։ Մոտ զուգահեռներ են նկատվում նաև անոթների ձևում, որոնց մեջ լայն տարածում են ստանում խողովակաձև քթիկներով անոթները և հանգուցանման բռնակներով թասերը։ Առկա է նաև մետաղամշակման հետագա զարգացումը։ Լայնակի շեղբով կացինները անկասկած ձուլվում էին հատուկ կաղապարներում։ Բավականին բարդ իրեր էին քորոցները, որոնց գլխիկները ունեին կենդանիների և մարդկանց տեսք։ Հայտնվում են նաև մետաղյա անոթներ։

Այսպիսով, առկա է տեխնիկական առաջխաղացում, արհեստների կազմավորում, որպես առաջին քաղաքակրթությունների արտադրության տեխնոլոգիական միջոցի էական բաղկացուցիչ մաս:

Ջ. Ջոնսոնի գնահատականով այդ ժամանակ Խուզիստանում գոյություն ունեին առնվազն 52 բնակավայր, ընդհանուր 25 000 բնակչությամբ (Johnson, 1973): Սուզան ավելի ու ավելի է դառնում քաղաքանման: Բնակավայրի վերին մասում, որը կոչվում է Ակրոպոլիս, պեղվել է խոշոր երկաստիճան հարթակ 35մ բարձրությամբ մոտ 60X45 մ մակերեսով: Բացարձակ պարզ է, որ մեր առջև բարդ մոնումենտալ կառույցի մաս է, ամենայն հավանականությամբ շումերական տիպի տաճարային համալիրի հիմք: Չի բացառվում, որ այն եղել է քաղաքի գլխավոր սրբատեղին (Amiet, 1986): Բարձրահարկ ճարտարապետության մասին խոսում են նաև կնիքների պատկերները, որոնց վրա մենք տեսնում ենք եռահարկ շինություններ: Ենթադրվում է որ բնակավայրերն ունեցել են քառաստիճան հիերարխիա, որոնց մեջ ընդգրկվում են առնվազն ևս երկուսը բացի Սուզայից՝ Չոգա-Միշը և Չանդուվեխը, որոնց կարելի է համարել մերձքաղաքային և վաղքաղաքային կենտրոններ:

Կարևոր նորամուծություն էր գլանաձև կնիքների հայտնվելը, որոնք պարզորոշ ցուցադրում են ուրուկյան կնքագործության տեղական տիպը, ինչպես համոզիչ ցույց տվեց Լե Բրետոնը: Ժամանակաշրջանի վերջում հայտնվում են բուլլաներ և տախտակներ պրոտոէլամական հիերոգլիֆիկայով: Այս նյութերը ցույց են տալիս հաշվարկման ֆունկցիայի տարածումը, որը հաստատվում է թվային նշանների համակարգի ստեղծմամբ ու կատարելագործմամբ: Բազմաճյուղային տնտեսական համակարգը կարող էր ղեկավարվել միայն բարդ ապարատով, որ անհրաժեշտությունից ելնելով հատուկ պրոֆեսիոնալ պատրաստվածությամբ ավելի ու ավելի էր առանձնանում համայնքի հիմնական զանգված կազմող անդամներից: Գլանաձև կնիքների վրա մենք տեսնում ենք կերպարներ, որոնք հավանաբար առաջնորդում էին այս հասարակական բուրգը՝ դա գահին նստած մորուքավոր քուրմ-ղեկավարի կերպարն է՝ ցուլի տեսքով: Քուրմ-ղեկավարի խոշոր պատկերը հակադրվում է մյուս կերպարների մանր պատկերներին և հանդիսանում է տիպիկ միջոց հաղորդելու այս կերպարների սոցիալական աստիճանը: Մոնումենտալ շինության առջև պատկերված աղեղից նետահարվող մարդկանց տեսարանը, որ կա նույն կնիքների վրա վկայում է, որ Խուզիստանում էլ քաղաքակրթության կայացումը անարյուն չի եղել լոկ տնտեսական ու մշակութային վերափոխումների շնորհիվ: Ինչևիցե, վաղերկրագործական համայնքների զարգացման երկար ճանապարհը մոտենում է որակական փոփոխության սահմանին:

Քաղաքակրթությունը ծնում է նաև գրային համակարգ, որը վկայում է շումերերենից տարբերվող լեզվի մասին, որը կարելի է կոչել էլամերեն կամ մասնագիտական գրականության մեջ այն իրավունք է ստացել կոչվելու պրոտոէլամերեն։

Տվյալ սոցմշակութային համալիրի ծագումը իր բաղկացուցիչ տարրերով բարդ է և կասկած չի հարուցում, որ այն հետևել է միջագետքյան, ավելի ճիշտ շումերական էտալոններին։ Բայց այս յուրահատկությունների մեկնաբանությունը տարբեր է։ Գ. Զայլդը, ընդգծելով հարավային Միջագետքի ուրուկյան և Էլամի խեցեղենի նմանությունը նշում է, որ տեղի է ունեցել շումեր արհեստավարժ-վարպետների ներհոսք Խուզիստան (Чайлд, 1951)։ Կ. Լամբերգ-Կարլովսկին հնարավոր է համարում Ուրուկի ժամանակ շումերների կողմից Սուզայի գաղութացումը (Ламберг-Карловский, 1986)։

Սակայն ազդեցության գործընթացը և փոխառությունները, հավանաբար, շատ ավելի բարդ բնույթ ունեին։ Այսպես, կնիքագործության զարգացումը օվալից գլանաձև կնիքների, փաստորեն գնում էր զուգահեռ Ուրուկում և Սուզայում։ Օվալ կնիքների պատկերների թեման, որը գենետիկորեն կապված էր գլանաձև կնիքների հետագա պատկերների հետ, Սուզայում նույնիսկ ավելի հարուստ ու բազմազան է՝ համեմատած Շումերի։ Էլամական պիկտոգրաֆիան, որը հավանաբար ձևավորվել է շումերական ազդեցությամբ, ընդհանուր առմամբ ներկայացնում է գրի ինքնուրույն համակարգ և ի տարբերություն շումերականի դեռ մինչև վերջ չի վերծանվել (Вайман, 1974 б)։ Այդ պատճառով նշված երևույթներում, այդ թվում նաև խեցեղեն անոթների մի շարք ձևերի տարածման մեջ, ճիշտ է տեսնել, հենց մշակութային էտալոնների և նմուշների ազդեցությունը, որն ընտրվի օգտագործվում էր էլամական հասարակության կողմից, որի սոցիալ-տնտեսական զարգացումը տանում էր դասակարգային հասարակության և պետության ստեղծման։

Այսպիսով, կարելի է խոսել ինքնաբուխ և խթանիչ վերափոխության համադասության մասին։

Շումերական էտալոնները իրենց ժամանակի համար լավագույնս ներկայացնում էին Մերձավոր Արևելքի տարածաշրջանի քաղաքակրթությունների տիպը և Էլամը, այնպես ինչպես Հյուսիսային Սիրիան, բազմատարր զարգացման ձևի օրինակներից մեկն է։

Պրոտոէլամական քաղաքակրթությունը, որը ձևավորվել էր որպես կայուն համալիր, սկսում է ակտիվորեն ազդել իր շրջապատի վրա՝ սկսած ամենավաղ փուլերից։ Դրա ուղղակի էքսպանսիան արտացոլվում է մի շարք հուշարձաններում։ Այսպես, Լուրիստանում Գոդին բնակավայրում տեղական երկրագործնե-

րի մշակույթի VI համալիրը փոխվում է Գոդին V-ով, տիպիկ պրոտոէլամական արտադրությամբ, ընդգրկելով 43 տախտակ արխայիկ տեքստեր (Weiss, Young, 1975)։ Էլ ավելի նշանակալի է նույն երևույթը Քաշանի օազիսում (Amiet, 1985), որը դատելով գերեզմաններում գտնված ոսկյա, արծաթյա և լազուրիտե զարդերից եղել է բավականին հարուստ բնակավայր։ Դա էլամական ճյուղն է, որն անցել է իրանական սարահարթի խորքը, հավանաբար, ինչպես դեռ նշել է Գ. Չայլդը (Чайлд, 1956), լազուրիտի, և հավանաբար պղնձի նախնադարյան շրջանի առևտրի ավանդականի ճանապարհով։

Մերձավոր արևելյան շրջանի այս նոր քաղաքակրթության կայուն համալիրը Պ. Ամիեն առանձնացնում է հատուկ պրոտոէլամական շրջանի մ.թ.ա. IV հազարամյակի վերջ, մ.թ.ա. III հազարամյակի սկիզբ (Amiet, 1986)։ Նշենք, որ մենք չենք կիսում նրա՝ այդ ժամանակ Խուզիստանում Զագրոսից «լեռնեցիների» ցեղերի ներսփռման համոզմունքը, թեև սկզբունքորեն քաղաքակրթության երկտարր բաղադրությունը, որը միավորում է տեղական (ոչ պարտադիր լեռնեցի) հիմքը և միջագետքյան էտալոնները, այդ ֆրանսիացի գիտնականի կողմից ճիշտ է ընկալվել։ Բազմաթիվ փաստաթղթերը, որոնք հավանաբար հիմանականում կազմակերպչական-տնտեսական գործունեության քաղաքական ցուցանիշերի հաշվառման համար էին, կասկած չեն թողնում, որ ձևավորվում է գրագիրների հատուկ սոցիալական խումբ։ Դա վարչական միավորում էր, որն անձնավորում էր պետական ապարատի բյուրոկրատական բնույթը, անկախ այն բանից սկսվել է այս գործընթացը տաճարային, թե այլ տնտեսությունների սահմաններում։ Ուրբանիզացիոն գործընթացը ընդգրկում է նաև Ֆարսայի տարածքը, որի վաղերկրագործական մշակույթը այդքան վառ ներկայացված է Թալի-Բակունում։ Որպես խոշոր կենտրոն այստեղ ձևավորվում է Թալի-Մալիան բնակավայրը, որը հավանաբար համապատասխանում է էլամական Անշանին և գրավում է 45 հա։ Բնակավայրում երևում են մետաղամշակման գործունեության հետքեր, բացվել է պաշտպանական պարիսպ, պեղվել է շինության մի մաս՝ բազմագույն երկրաչափական պատկերներով, այդ թվում բազմաստիճան խաչերով, որոնք հիշեցնում են հարավարևմտյան Միջին Ասիայի գեոկայուրյան տիպի ուշ էնեոլիթյան խեցեղենի զարդանախշերը։

Պատմական զարգացման արագացման տեմպերը Իրանի հարավարևմտյան մասում սրեցին զարգացման անհավասարությունը։ Այժմ այստեղ հարևանություն են անում երկու գոտի. հին արևելյան տիպի քաղաքային քաղաքակրթությունը և նստակյաց երկրագործական համայնքը, որը զարգանում է նույն ճանապարհով, բայց ավելի դանդաղ։

Ի դեմս պրոտոէլամական քաղաքակրթության, ստեղծվում են նոր, հզոր օջախ և ստեղծագործական ազդակներ, որոնք Կենտրոնական և Հարավարևելյան Իրանում ազդեցին վերափոխման խթանման գործընթացների վրա: Կայուն մշակութային համալիրով պրոտոէլամական համայնքների ուղղակի էքսպանսիան սկսվում է, ինչպես երևում է, Գոդինից և Սիալկից դեռ ուրուկյան շրջանի վերջում: Քիչ ավելի ուշ ժամանակաշրջանին է վերաբերում նմանատիպ պրոտոէլամական համալիրը, Յահյա - Թեփեն, որտեղ կային և տախտակներ, և գլանաձև կնիքների դրոշմահետքեր, և որը, ինչպես Սիալկն ու Գոդինը, գտնվում էր տեղական նստակյաց երկրագործների բնակավայրի վրա (Lamberg-Karlovski, 1970, 1986): Պրոտոէլամական տախտակ գտնվել է նաև սեիստանյան Շահրի-Սոխտե քաղաքում, սակայն նա այնտեղ ընդամենը օտար տարր է տեղական մշակույթի մեջ, որը զարգացնում էր հյուսիսային Բելուջիստանի և մի քիչ էլ հարավային Թուրքմենստանի համալիրների մշակութային ավանդույթները: Էլամական մշակույթի ազդեցության փաստը Իրանական սարահարթի համայնքների վրա կասկած չի հարուցում և ծավալներով հիշեցնում է ուբեյդյան մշակույթի ազդեցությունը Հյուսիսային Միջագետքի և Հյուսիսային Սիրիայի վրա: Շումերա-էլամական միջավայրում ձևավորված մշակութային էտալոնների տարածման մեխանիզմը կարող էր տարբեր լինել, սկսած էլամիտների ուղղակի տարածումից (որոնց մեջ կարող էին լինել վաճառականներ), մինչև նմանակելն ու իր ժամանակի գերիշխող մշակութային էտալոններին հետևելը:

Երկրորդ խոշոր ժամանակաշրջանը, որն արտացոլվում է Իրանի հնագիտական նյութերում՝ մ.թ.ա. III և մ.թ.ա. II հազարամյակի առաջին կեսն է, երբ բացի խուզիստանյան և վաղերկրագործական մշակույթների այլ օջախներից տեղի է ունենում գործընթաց, որի ժամանակ զարգանում են տեղական քաղաքակրթությունները նախաքաղաքային, կամ վաղքաղաքային տիպի մշակույթներով: Համեմատած էլամական համայնքների հետ, տվյալ գործընթացը տեղի էր ունենում դանդաղ տեմպերով և համեմատաբար ավելի շատ էր կիրառում Շումերի և Էլամի մշակութային մոդելները, ներմուծելով դրանք տեղական համալիրներում:

Այս առումով մշակութա-տնտեսական բավականին յուրահատուկ նմուշ կարող է լինել Պարսից ծոցի հարավային ափը և առաջին հերթին Բահրեյնը և Օմանը: Այս շրջանները հայտնի են կայուն շումերական ավանդույթներով, որոնք տեղադրում էին մարդկային քաղաքակրթության ակունքները Դիլմուն երկրում, որը գերադասվող տարբերակով տեսնում են Բահրեյն կղզում (Бибби, 1984): Մ.թ.ա. III հազարամյակի այս շրջանը ուներ համեմատաբար բարձր մակարդակի բարեկեցություն: Երկրագործությունն ու մետաղի ձուլումը գալիս են

փոխարինելու նեոլիթյան ձկնորսների և որսորդների արխայիկ ավանդույթներին, զարգացնելով նախաքաղաքային տիպի մշակութային համալիր (Potts, 1978, Frifelt, 1979, Sleuzion, Costantini, 1980)։ Առկա է նաև մոնումենտալ շինարարությունը, որը ներկայացվում է Բարբարա տաճարային համալիրով (Mortensent, 1970)։ Գտնված նյութերը բարձրարժեք գեղարվեստական իրեր են, որոնք վկայում են հարստության կուտակման մասին, իսկ կնքագործությունը վկայում է հարավային Միջագետքի մշակութային էտալոնների կիրառման մասին։ Դրա հետ մեկտեղ առկա են կապերը հարավարևելյան Իրանի համայնքների հետ։ Կասկած չկա, որ Պարսից ծոցի համայնքները իրենց զարգացման համար պարտական են բազմաստիճան առևտրի զարգացմանը, ինչպես նախախարապյան, այնպես էլ հատկապես խարապյան ժամանակաշրջանում։ Զարմանալի չէ, որ այստեղ առաջացել է կնքագործության խարնուրդ տիպը, այսպես կոչված Պարսից ծոցի կնիքների և միջագետքյան ու խարապյան կնքագործության ավանդույթների համադրումը։ Ոչ պակաս նշանակալի է այս բնակավայրերի աստիճանաբար անկումը Խարապայից դուրս գալով և Հնագույն Արևելքի այս երկու խոշոր քաղաքակրթությունների կապերի թուլացման, կամ նույնիսկ լիովին կապերի լիովին խզման պատճառով։

Հյուսիսարևելյան Իրանի համար նոր դարաշրջանի երևույթները արտացոլվել են այնպիսի հուշարձանների նյութերում, ինչպիսիք են Թեփե-Հիսարը, Շահ-թեփեն (Arne, 1945) և Թյուրենգ-թեփեն։ Ինչպես տեսանք, Հիսարը սկզբում ներկայացնում էր բնակավայր, ուր բնակվում էին Սիալկի մշակույթ կրողները, որոնք իրենց բուն տարածքից շարժվել էին դեպի հյուսիս-արևելք։ Այս առումով հատկանշական է, որ Հիսարի անոթների մոտիվներն ու պատկերները, թեև կրում են Սիալկի խեցեղենի զարդանախշերը, ընդհանուր առմամբ, շատ ավելի աղքատիկ են ու սահմանափակ։ Հետագայում տեղի է ունենում Սիալկի ավանդույթների վերափոխում։ Հիսար II A շերտում հայտնվում են գորշ անոթներ, որոնք աստիճանաբար դուրս են մղում գունազարդ խեցեղեը Հիսար II B շերտից։ Այս գործընթացը հիմք դրեց «գորշ խեցեղենի մշակույթի» ձևավորմանը, որի ծագման և էթնոմշակութային բնորոշման մասին մինչև վերջին ժամանակները բազմաթիվ տարբեր կարծիքներ են արտահայտվել։ Այսպես, շատ տարածված է «գորշ խեցեղենի ժողովրդի» եկվորության կարծիքը, սակայն այն դժվար թե ամրապնդվի նույնիսկ հնագիտական նյութի մանրակրկիտ հետազոտմամբ։ Հիսար II A շերտի առաջին գորշ անոթները ձևով կրկնում են այն անոթները, որոնք գոյություն ունեն Հիսար I-ում։ Ավելի հավանական է, որ այն ցույց է տալիս խեցեգործության տեխնոլոգիայի կատարելագործումը, որը թույլ տվեց ստանալ մգացված գորշ անոթներ։ Հին խեցեգործական ավանդույթների

դուրս մղումը տեղի է ունենում ոչ անմիջապես, այլ աստիճանաբար և գունազարդ անոթները, որպես կանոն, դրված են գորշ անոթների կողքին նույն դամբարաններում: Ժամանակի ընթացքում մշակվում են գորշ անոթների յուրահատուկ ձևեր, ինչպես օրինակ բարձր ոտքի վրա սկիհները: Հիսար II այլ նյութերից հարկ է նշել տարբեր բրոնզե իրեր, այդ թվում երկպարույր գլխիկով քորոցներ, առանցքային կողով դաշույններ, բազմապարույր ապարանջաններ: Հետաքրքիր է գուրզի քարե գլխիկը, որը ամրանում էր փայտե կոթին: Կախիչներով կնիքները պատրաստվում են ինչպես քարից, այնպես էլ բրոնզից: Դատելով թաղման գույքի բազմազանությունից հասարակության մեջ տեղի էր ունեցել որոշակի դասակարգում, որն արտացոլվում է որոշ դամբարաններում թաղման նյութի ավելի հարուստ տեսականիով: Այսպես, գերեզմաններից մեկում բացի ավանդական կավամաններից գտնվել են ուլունքներ, ապարանջաններ, երկու կնիք և պղնձյա քորոց: Մեկ այլ դամբարանում ոչ խեցեղեն նյութն էլ ավելի է ցուցադրում հանգուցյալի բարեկեցությունը: Բացի պղնձյա կնիքից, այստեղ գտնվել են արծաթյա ականջողեր և կախիկ:

Այս երևույթները ստացել են հետագա զարգացում Հիսար III համալիրում, որն իր յուրահատուկ հատկանիշներով կարելի է առանձնացնել, որպես հատուկ հնագիտական մշակույթ: Հիսար III մշակույթի համար բնորոշ է գորշ խեցեղենը, որը կոկման միջոցով զարդարված էր նախշով, և քթիկով տարատեսակ անոթները: Գտնվել են ոտքի վրա սկիհներ ու գավաթները, միջնորմով բաժանված կախիչներով բրոնզե կնիքներ, առանցքային կողով և քառակող սվիններով բրոնզե նիզակներ (այս մասերը միանում էին բռնակին գլխիկավոր կեռ կոթունով), բրոնզե գավազաններ՝ բազմաֆիգուր հորինվածքով ու կենդանակերպ գլխիկներով: Հիսարի բացարձակ ժամանակագրությունը բազմաթիվ անգամ եղել է քննարկման առարկա: Ներկայումս գերիշխում է երկար ժամանակագրության տեսակետը, որը տեղագրում է Հիսար III մ.թ.ա. III հազարամյակի II կեսում (Bovington a.o., 1974)՝ թույլ տալով հասցնել ավելի ուշ շրջանի համալիրները (Հիսար III C) մ.թ.ա. II հազարամյակի սկիզբ (Dyson, 1965 a): Բուն Թեփե-Հիսարը գտնվում է Էլբուրսի հարավային ստորոտում, բայց այս տիպի հուշարձանները լայն տարածում ունեն և հյուսիսում և հարավարևելյան Մերձկասպիան շրջանում՝ հատկապես Գյուրգենի հովտում (Շահ-թեփե, Թյուրենգ-թեփե): Մասնակիորեն դրանք հասնում են արևմտյան Թուրքմենստանի լեռնային շրջաններ, որտեղ դրանք սահմանակցվում են Ալթին-Դեփեի մշակույթին, որը բնորոշվում է կանաչասպիտակ խեցեղենով: Դատելով հետախուզություններից, որոնք անց են կացվել Մեշխեդի շրջանում, այս տարածքը նույնպես

ընկած է «գորշ խեցեղենի» գոտուց դուրս՝ մշակութային տեսանկյունից ձգտելով Ալթին-Դեփեին։

Բավականին լավ է ուսումնասիրված բուն Հիսար բնակավայրի կառուցվածքը։ Բացի վաղերկրագործական բնակավայրի համար սովորական բազմասենյականոց կացարաններից, որոնք բաժանված են նեղլիկ փողոցներով, այստեղ կար առանձին համալիր, հայտնի «այրված շինություն» անվամբ։ Եվ իսկապես, այրված պատերը և հատակի վրա պահպանված մեծարժեք գտածոները թույլ են տալիս ենթադրել, որ այս շինությունը ոչնչացել է աղետի հետևանքով։ Շինության ընդհանուր տարածքը մոտ 250մ է, իսկ նրա դրսի պատերը աչքի են ընկնում հաստությամբ։ Կարծիք կար, որ դա աշխարհիկ առաջնորդի կացարան է, բայց դատելով հետագա ուսումնասիրությունից, որ կատարվել է 70-ական թվականներին Ռ. Դայսոնի ղեկավարած ամերիկյան արշավախմբի կողմից՝ հաստատվեց, որ դա տաճարային շինություն է (Дайсон, 1986)։ Հիսար III բազմաթիվ գերեզմաններում գտնվել են մեծաքանակ թանկարժեք և անսովոր նյութեր։ Այսպես, օրինակ «պարուհու գերեզմանը», որտեղ կան բրոնզից ու արծաթից անոթներ, տուփիկներ, մատանիներ, ականջողեր ու կախիկներ։ Շքեղ են վզնոցները, որոնց ուլունքները պատրաստված են արծաթից, փիրուզից ու լազուրիտից, ընդ որում վերջիններիս մեջ կային ցլի գլխիկի տեսքով ուլունքներ։ «Երիտասարդ զինվորի» գերեզմանում բացի երեք կավանոթներից կային ուլունքներ, ալեբաստրից անոթ, բազմաթև աստղի վրա կանգնած այծի պատկերով բրոնզե գավազան և չորս բրոնզե դաշույն։ Այսպես են արտացոլվում ունեվոր վերնախավը, ներառյալ քրմերը, տարբեր տիպի առաջնորդները և համայնական կոլեկտիվի ղեկավարները, որոնք հակադրվում էին համայնքի շարքային անդամներին։ Հարստության կուտակման մասին վկայում են գանձերը, որոնք ներառում են ալեբաստրի անոթներ, քարե ծիսական իրեր (փոքր սյուներ, կոթով սկավառակներ), զենք, ներառյալ ծիսական զենք՝ ոսկուց ու արծաթից, պղնձե անոթներ, տարբեր տիպի ոսկյա իրեր, այդ թվում բարակ թիթեղի վրա փորագրած մուֆլոնի գլուխներ, փոքր անցքերը թելերի կամ մեխերի համար, վկայում են այն մասին, որ այս թիթեղները կարվում էին կտորի կամ ամրանում էին ինչ-որ մակերեսի։ Այս տիպի գտածոների թվում է նաև XIX դ. սկզբում Թյուրենգ-թեփեում գտնված այսպես կոչված աստրաբադյան գանձը բաղկացած ոսկյա, բրոնզե և քարե իրերից։ Իրերի թվում աչքի են ընկնում երկու ոսկյա անոթ։ Դրանցից մեկի վրա պատկերված են արծիվներ, իսկ մյուսի վրա մարդիկ են կարճ կիսաշրջազգեստներով, նման Շումերի և Էլամի բնակիչների հագուստներին (Rostovzeff, 1919)։ Բուն Թյուրենգ-թեփեն խոշոր կենտրոն էր։ Այն ուներ մոտ 700մ երկարություն։ Գլխավոր բլրի բարձրությունը 34մ

էր (Wulsin, 1933; Deshayes, 1963, 1974)։ Դատելով կատարված պեղումներից՝ այս կենտրոնական բլուրը հում աղյուսից կառուցված հավելյալ կառույց է, որը դառնում է հարթակի նման մի հիմք մոնումենտալ շինության համար (Deshayes, 1975)։ Ինչպես և Հիսարում, այստեղ հայտնաբերվել են զինված ռազմիկների հարուստ դամբարաններ։ Ռազմական առաջնորդի ֆունկցիան օժանդակում էր աշխարհիկ իշխանության ձևավորմանը։ Թյուրենգ-թեփեն նախաքաղաքային կամ վաղքաղաքային տիպի բնակավայր էր, որը յուրովի մայրաքաղաք էր գյուրգենյան ցեղախմբերի համար։

Հիսարի մշակութային արտադրության զարգացումը վկայում է նշանակալի տեխնիկական առաջխաղացման և մասնագիտական ճյուղերի մասին, որոնք սպասարկում էին հասարակության տարբեր խավերի աճող պահանջները։ Բարակ պատերով գորշ խեցեղենը երբեմն անփայլ սև մակերեսով, աչքի է ընկնում հարստությամբ և ձևերի բազմազանությամբ։ Հատկապես արտահայտիչ են նրբագեղ ջրամանները (գրաֆին)՝ վզիկներին ծեփածո օղակով, որը ստացվում էր կոկման միջոցով և գնդաձև անոթներ, որոնք ավարտվում են երկար կտցանման քթիկներով։ Այս տարածված ձևը հին վարպետները պատրաստում էին և՛ քարից, և՛ բրոնզից։ Դրա հետ մեկտեղ Հիսարի անոթների մեծ մասը հիանալի թրծած լինելով պատրաստված են առանց դուրգի օգնության, ինչը, սակայն, նշանակալիորեն չի ազդել ձևերի հստակության վրա։ Խեցեղենի արտադրությունը տալիս էր մասսայական արտադրանք՝ սպասարկելով հասարակության բոլոր անդամներին։ Թանկարժեք իրերից գտնվել են մարմարանման կրաքարից պատրաստված անոթներ, ինչպես նաև անոթներ պատրաստված բրոնզից, արծաթից և ոսկուց։ Զարմանալի չէ, որ հենց դրանք են հանդիպում գանձերի և հարուստ թաղումների նյութերի թվում։ Մետաղամշակումն ու մետաղագործությունը, հատկապես բուն Հիսարում, ստանում է անսովոր լայն կիրառում։ 70-ական թվականներին բնակավայրի հետախուզման ժամանակ ամենուր հայտնաբերվել են բրոնզի ձուլման հետքեր և նախևառաջ մեծ քանակությամբ շլակեր։ Իր ծաղկմամբ Հիսարը հավանաբար մեծապես պարտական է բրոնզի մշակման հետ կապված արհեստներին։

Այդ պատճառով մասնավորապես Հիսարի դամբարաններում բրոնզե իրերը դրված են ցոփ շռայլությամբ։ Զենքի արտադրությունը անկասկած մասնագիտացված էր։ Այստեղ ձևավորվել էր հատուկ միջոց, որով բրոնզե մասերը ամրանում էին փայտյա մասին ուղիղ անկյան տակ կլորացված կոթունի միջոցով, որն ամրացվում էր գամերով։ Նիզակի գլխիկներն ու դաշույններն ունեն առանցքով անցնող բարձր կող։ Բավականին հաճախ են հանդիպում սվինների ու գուրզերի ձևավոր գլխիկներ։ Արտահայտիչ են նաև տորևտիկայի գործերը,

որոնցում բացի գավազաններից և զոոմորֆ կախիկներից գտնվել է սաղր արծաթյա ափսե պատրաստված ցլի վրա պառկած առյուծի ռելիեֆային պատկերով: Մեծ վարպետության էին հասել և ոսկերիչները, որոնք ստեղծել են ոսկյա հուլունքներից և կիսաթանկարժեք քարերից բարդ վզնոցներ:

Ավանդական բրոնզե կնիքներից բացի կան և գլանաձև կնիքներ, ինչպես ներմուծված, այնպես էլ հավանաբար տեղի արտադրության: Դրանցից մեկի վրա պատկերված է երկանիվ մարտակառք:

Բրոնզե գավազանի գլխիկի վրա կա ցուլերը լուծքին լծած հերկելու տեսարան, որը խոսում է քաշող ուժի լայն կիրառության մասին: Հիսարում բազմաթիվ են բրոնզից, կամ ալեբաստրից պատրաստված կենդանիների արձանիկներ: Լազուրիտը, որը հասնում էր այստեղ կիսահումքային վիճակում, մշակվում էր մեծ քանակությամբ (Bulgarelli, 1979): Դրա հետ մեկտեղ քիչ անսպասելի է այս տիպի հուշարձանների համար կանանց արձանիկների սահմանափակ քանակը: Դրանք միայն քարից ու մետաղից կոպտավուն կուռքեր են, և հավանաբար բնորոշ են Հիսարում գոյություն ունեցող տեղական մշակույթին: Թյուրենգ-թեփեում հայտնի են կանգնած կանաց կավե արձանիկներ, որոնց ձեռքերին ու որտքերին բազմաթիվ ապարանջաններ կան: Որպես կանոն նրանց ձեռքերը տարածած են, արձանիկներից մեկը պահում է կուրծքը: Հարուստ և բազմազան նյութական մշակույթը վկայում է մ.թ.ա. III հազարամյակի երկրորդ կեսի և II հազարամյակի սկզբի հյուսիսարևելյան Իրանի հասարակության զարգացման բարձր մակարդակի մասին: Այստեղ ակներևաբար տեղայնանում էր իրանական սարահարթի տարբեր շրջաններում ձևավորվող նախաքաղաքային քաղաքակրթությունների կենտրոններից մեկը:

Մեկ այլ նման կենտրոն ուսումնասիրվել է Իրանի արևելքում, Սեիստանի շրջանում Գիլմենդ գետի դելտայում, որի հեղեղումները բարենպաստ էին ոռոգվող երկրագործության զարգացման համար: Այստեղ են տեղակայվում մի շարք վաղերկրագործական բնակավայրեր, որոնց մեջ չափով և մշակույթի հարստությամբ աչքի է ընկնում Շահրի-Սոխտե բնակավայրը, որը հնում եղել է օազիսի մայրաքաղաք (Tosi, 1968, 1969, 1983; Тоси, 1971; Удеумурадов, 1985): Դրա ստորին շերտերը, որոնք վերաբերում են մ.թ.ա. IV հազարամյակի վերջին և III հազարամյակի սկզբին տալիս են այս տարածքի տարբեր ցեղախմբերով բնակեցման բարդ պատկերը: Շահրի-Սոխտե I շերտերի գունազարդ խեցեղենի հիմնական մասը նման է Հյուսիսային Բելուջիստանի ցեղերի նույն ժամանակ պատրաստված անոթներին: Դրա հետ մեկտեղ 20-ից 30% խեցեղենը նման է հարավային Թուրքմենստանի համայնքների գունազարդ խեցեղենին:

Հարավթուրքմենական նմուշներին են նման նաև կանացի արձանիկները։ Հավանաբար Գիլմենդի դելտայի յուրացման շրջանում այստեղ են ներթափանցել խմբեր, որոնց մշակույթը արտացոլվել է մշակութային ավանդույթների սիմբիոզում։ Նախաէլամական տեքստերով տախտակները և գլանաձև կնիքները ցույց են տալիս հեռավոր արևմուտքի հետ կապերը։ Իրենք կնիքները և նրանց դրոշմները թույլ են տալիս հարց բարձրացնել կնքագործության դպրոցի գոյության մասին, որը Պ. Ամյեն առաջարկել է կոչել արևելյան նախաէլամական (Amiet, 1986)։ Երկրորդ շրջանում, որը հիմնականում վերաբերում է մ.թ.ա. III հազարամյակի առաջին կեսին, բազմաոճ գունազարդ խեցեղենը փոխարինվում է կայուն միատիպ խեցեղենի արտադրությամբ։ Կավանոթները սկսում են պատրաստվել դուրգի վրա և ունեն նիստավոր անոթների ձև։ Բնակավայրը գրավում է մոտ 80հա և խիստ կառուցապատված է կացարաններով, որոնք բաղկացած են 6-10 սենյակներից՝ ընդհանուր մակերեսով 90-ից 150մ²։ Կացարանային կառույցները իրարից բաժանվում են մինչև 2մ լայնությամբ փողոցներով։ Հարկ է նշել լազուրիտի մշակումը Շահրի-Սոխտեի արևմուտքում, որը հավանաբար ծառայում էր ոչ միայն հետագա բեռնափոխադրման կետ, այլ նաև լազուրիտի նախնական մշակման կենտրոն։ Շահրի-Սոխտե III, որը հիմնականում միաժամանակյա է Հիսար III և թվագրվում է մ.թ.ա. III հազարամյակի երկրորդ կեսով, ապրում էր իր ամենածաղկուն շրջանը որպես քաղաքային խոշոր կենտրոն։ Այս վերելքը վերաբերում է Շահրի- Սոխտեի ամբողջ շրջանին բացի վերջին հարյուրամյակից։ Ստանդարտ ձևերի կավանոթները հազվադեպ էին պատվում գունազարդ նախշով։ Դրանց արտադրությունը կենտրոնացված էր հատուկ տեղերում, որտեղ կողք կողքի դրված էին մի քանի տասնյակ երկհարկ հնոցներ։

Արհեստագործական թաղամասի այդպիսի տեղայնացումը վառ հաստատում է, որ արհեստները առանձնացել էին արտադրության ինքնուրույն մասնագիտացված ճյուղերի։ Բազմաթիվ են կախիկներով մետաղյա կնիքները։ Նրանց վրայի պատկերները հայտնի են ինչպես կնիքների վրայից, այնպես էլ կավի վրա թողնված դրոշմերից։

Համեմատած Հիսարի կնիքների՝ պատկերներն այստեղ ավելի բազմազան են, բացի երկրաչափական և բուսական մոտիվներից, այստեղ շատ են տարբեր կենդանիների պատկերները։ Հանդիպում են նաև մարդկանց պատկերներ։ Ժամանակաշրջանի վերջում նկատվում է որոշ անկում, Շահրի-Սոխտեի բնակավայրը փոքրանում է։ Զարգացման վերջին փուլում մ.թ.ա. III հազարամյակի վերջում և II հազարամյակի սկզբում այն գրավում էր 5 հեկտար տարածություն։ Շահրի-Սոխտե մշակույթի յուրահատկություններից է կատակոմբային

թաղումը՝ մեծաթիվ խեցեղենով։ Գերակայում են եզակի թաղումներ ինչպես հասարակ գերեզմաններում, այնպես էլ կատակոմբներում, բայց հանդիպում են նաև զույգ և կոլեկտիվ թաղումներ։ Դամբարանադաշտը հատուկ միավոր էր քաղաքային կառուցվածքում՝ գրավելով մոտ 20հա։ Առկա է նաև նկատելի տարբերություն թաղման գույքում, ինչը արտացոլում է հնագույն հասարակության սոցիալական շերտավորումը։ Այսպես, գերեզմանների մեծ մասում 2-3 անոթ կա, մինչդեռ առանձին դամբարաններում դրանց թիվը հասնում է 40-ի, էլ չասած արժեքավոր և հազվագյուտ իրերը, ինչպիսիք են պոլիքրոմ գունազարդ անոթները, որոնք ակներևաբար ներմուծված էին և ունեին բելուջիստանյան ծագում, ոսկուց և կիսաթանկարժեք քարերից ուլունքներ, քարե անոթներ և արծաթյա իրեր (Piperno, 1979)։ Կանաչասպիտակ գունազարդ խեցեղենը որոշ դեպքերում հիշեցնում է հարավթուրքմենական Ալթին-դեփեի մշակույթը։ Պեղված շինությունների մեջ աչքի է ընկնում մոտ 500մ² տարածքով խոշոր շինությունը, որը հավանաբար եղել է քաղաքի վերնախավի անդամներից մեկի կացարանը։ Այսպես, հարստության կուտակումը հանգեցրեց սոցիալական խավերի առանձնացման, կենսակերպի տարանջատման, և հասարակության շերտավորումը ամրագրվեց մշակութային էտալոններում և նորմերում։

Եթե Շահրի-Սոխտեում նկատվում է հարևան Բելուջիստանի և նույնիսկ հարավային Թուրքմենստանի ազդեցությունը, ապա Կերմանում գերակայում է արևմտյան, այդ թվում էլամական ազդեցությունը։ Այստեղ գտնվող Թալի-Իբլիս (Caldwell, 1967, Sarraf, 1980) և Թեփե-Յահյա բնակավայրերի ստորին շերտերը տալիս են գունազարդ խեցեղեն պատրաստող վաղերկրագործական համայնքների աստիճանական զարգացման պատկերը։ Թալի-Իբլիսում դեռ մ.թ.ա. V հազարամյակից գոյություն ուներ պղնձի ձուլում, որը խթանվում էր մոտակայքում գտնվող պղնձի հանքերի առկայությամբ։ Ինչպես վկայում են Յահյա-թեփե փոքր բնակավայրի նյութերը, մ.թ.ա. IV հազարամյակի վերջում նկատվում է մասնագիտացված արտադրության ակտիվ զարգացում և էլամական ազդեցության ուժեղացում (շերտեր IV A, IV B)։ IV B շերտում նկատվում է գեղարվեստական ռելիեֆով ստեատիտի անոթների պատրաստման ակտիվ գործունեություն։ Այս տիպի իրերը լայնորեն տարածվել են ամբողջ Մերձավոր Արևելքում և, դատելով նյութերից, Յահյա-թեփեն եղել է դրանց արտադրման կարևոր կենտրոն (Khole, 1979)։ Պրոտոէլամական տախտակները Յահյա IV C շերտում, որտեղ կան և տեքստեր, և նախապես պատրաստված տախտակներ տեքստերը գրելու համար (Lamberg-Karlovsky, 1972; Lamberg-Karlovsky, Tosi, 1973) վկայում են այն մասին, որ ինչպես և Սիալկում էլամական մշակութային

համալիրը հաստատվում է տեղական նստակյաց համայնքի բնակավայրի վրա, մասամբ փոխելով, մասամբ ասիմիլացնելով տեղական ավանդույթները։

Դատելով գտնված նյութերից՝ Կերմանի կարևոր կենտրոնը հավանաբար նրա մայրաքաղաքը սեիստանյան Շահրի-Սոխտեի նման, Շահդադն էր, որտեղ գլխավորապես դամբարաններից գտնվել են գեղարվեստական մշակույթի հետաքրքիր իրեր (Hakemi, 1972; Amiet, 1976; Vidal, 1982)։ Այստեղ գտնվել են փորագրված քարե իրեր, այդ թվում գլանաձև կնիքներ, տարբեր տիպի տուփիկներ և քարից քանդակած արձանիկներ։ Կայծքարային շաղափների առատությունը խոսում է իրերի մեծ մասի տեղական արտադրության մասին։ Շահդադի վաղ փուլերում առկա է պրոտոէլամական էտալոնների ուղղակի ազդեցությունը, թեև ընդհանուր առմամբ համալիրը պահպանում է խիստ յուրահատուկ գծեր։ Մ.թ.ա. III հազարամյակի երկրորդ կեսից նկատվում է մշակութային վերելք, գեղարվեստական իրերի քանակի կտրուկ աճ, ընտրովի կիրառելով միջագետքյան և էլամական մոդելները։ Դամբարաններում գտնվել են դիմանկարային քանդակներ։ Տորևտիկայի իրերի մի շարք առանձնահատկությունները և միջնորմով բաժանվող բրոնզե կնիքները ունեն ուղղակի նմանակներ Միջին Ասիայի և հյուսիսային Աֆղանստանի նյութերում, որ ստիպում է ենթադրել, որ Շահդադի շրջանը այդ ժամանակաշրջանում մտնում էր հին արևելյան տիպի պրոտոբակտրիական բլոկի մշակութային տարածաշրջանի մեջ։

Այս ժամանակաշրջանի Իրանի հյուսիսարևմտյան շրջանի զարգացման մասին փաստերը ավելի սահմանափակ են։ Այստեղ անկասկած ռազմական գործի և քաղաքական իշխանության կազմավորման վրա խթանիչ ազդեցություն էր ունեցել հարևան Միջագետքի պետությունների ռազմա-առևտրական էքսպանսիան։ Քաղաքային տիպի խոշոր կենտրոնների առկայությունը մ.թ.ա. II հազարամյակում կասկած չի հարուցում։ Այսպես, Գոդին III բնակավայրը գրավում էր մոտ 15հա տարածություն, ուներ ամուր պաշտպանություն և մոնումենտալ, հավանաբար պալատական տիպի շինություններ։ Պեղվել է երկու թաղումով քարից դամբարան։ Մերձուրմիայի շրջանում այս ժամանակաշրջանին վերաբերող Հասանլու IV տիպի հուշարձաններից բացի բուն Հասանլուից պեղվել է ևս մի հուշարձան՝ Դինխա-թեփեն։ Այնտեղ պեղվել է խոշոր շինություն, որն ակներևաբար պատկանում է մոնումենտալ ճարտարապետությանը։ Քարարկղային դամբարաններից մեկում կոլեկտիվ թաղումը ուղեկցվում է ոսկու և արծաթե զարդերով։ Գտնվել է նաև մի բրոնզե թուր։ Խեցեղեն իրերը ներկայացված են դուրգի վրա պատրաստված գունազարդ խեցեղենով։ Ճիշտ է, դրանցում նկատվում է արևմտյան խաբուրյան տիպի խեցեղենի նմուշների ուժեղ ազդեցությունը։

Այսպիսով, մ.թ.ա. II հազարամյակի սկզբում Շումերի և Էլամի ազդեցությամբ մի կողմից, և Ինդոսի հովտի խարապյան քաղաքակրթության ազդեցությամբ մյուս կողմից, ձևավորվում է պրոտոքաղաքների մի ամբողջ գոտի, որտեղ հաճախ օգտագործում էին երկու առաջավոր կենտրոնների մշակութային ձեռքբերումները։

Այս երկու քաղաքակրթությունների, որպես սոցիալ-տնտեսական երևույթի ձևավորումը ինքնաբուխ վերափոխությունների ձևով օրինաչափ արդյունք էր, որի ակունքները սկսվում էին երկրագործների արխայիկ շրջանից, երբ երկրագործները առաջինը եկան նոր կենսակերպի և ստեղծեցին մշակութային և տնտեսական համալիր, որը կրում էր հետագա զարգացման նախադրյալները։ Դրա հետ մեկտեղ շումերական, իսկ հետո պրոտոէլամական քաղաքակրթությունների ստեղծումն ու էքսպանսիայի ակտիվացումը չէին կարող չունենալ խթանիչ ազդեցություն դեռ վաղ փուլերից մինչև մ.թ.ա. III հազարամյակի կեսը։ Ճիշտ է, այդ ժամանակ իրանական համայնքների խոր թիկունքում ձևավորվում է հզոր յուրահատուկ մշակութային համալիր, հայտնի է որպես գեոկսյուրյան մշակույթ, որի հատուկ դերը, որպես պրոտոէլամական էքսպանսիայի ժամանակագրության էկվիվալենտի արժանացել է Մ. Թոսիի և Կ. Լամբերգ-Կարլովսկու ուշադրությանը (Lonberg-Karlovsky, Tosi, 1973)։

Մ.թ.ա. III հազարամյակի II կեսին և II հազարամյակի սկզբին քաղաքային մշակույթի ձևավորումը նույնպես տեղի է ունեցել Միջագետքի և Էլամի գեղարվեստական և գաղափարախոսական էտալոնների ընտրովի կիրառմամբ, ընդ որում, ինչպես ցույց է տվել առաջին այդ տիպի գտածոն՝ աստրաբադյան գանձը, բավականին արխայիկ ձևով։ Ինքնաբուխ և խթանիչ վերափոխման սիմբիոզի այս նոր թռիչքը տվեց փայլուն ձեռքբերումներ մշակութային ոլորտում, բերելով մասնավորապես հինարևելյան տորևտիկայի հատուկ դպրոցի ձևավորմանը, որը Պ. Ամյեն կատարելապես ուսումնասիրել է (Amiet, 1986)։ Ընդլայնված այն կարելի է կոչել պրոտոբակտրիական։ Սակայն փայլուն զարգացումը անսպասելիորեն ընդհատվում է արդեն մ.թ.ա. II հազարամյակում և հնագետները, դժվարությամբ են գտնում գենետիկական համապատասխանության շղթաներ հետագա մշակույթներում։

Առաջին բացատրությունը ինչ-որ ցեղերի ներխուժումն է, որոնք ոչնչացրել են այս հնագույն մշակութային կենտրոնները, ինչպես նաև խարապյան քաղաքակրթությունը Ինդոսի հովտում (օրինակ Wheeler, 1959)։ Սակայն ավերման հետքեր ինչպիսին է Թեփե-Հիսարի «այրված շինությունը»- ամենուր չէ։ Ավելին, Միջին Ասիայի հարավի մշակույթների նման (մասնավորապես Ալթին-դեփե), մ.թ.ա. II հազարամյակի կեսին ավանդական կենտրոնների քայքայման հետ

մեկտեղ Մուրհաբի հովտում և Ամուդարյայի միջին հոսանքում տեղի է ունենում նստակյաց համայնքների տեղաշարժ նոր տարածքների յուրացման համար: Հավանաբար պետք է խոսել ոռոգվող երկրագործության վրա հիմնված տնտեսության ճգնաժամի մասին (Массон, 1959): Հավասարակշռված տնտեսական սիստեմի խախտման խթան կարող էին հանդիսանալ տարբեր գործոններ, օրինակ կլիմայական փոփոխությունները:

Կզլկումում կատարված նախնադարյան բնակավայրերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մ.թ.ա. III հազարամյակի վերջում և II հազարամյակի սկզբում տեղի է ունենում կլիմայական փոփոխություն: Սկսվում է կսերոթերմիկ մաքսիմումը, չորանում են շատ ջրային աղբյուրներ (Виноградов, Мамедов, 1975 էջ 234-255): Խոնավ պայմաններից արիդ (չոր) փուլը, որը ընկնում է մ.թ.ա. 3000-1800 թթ. նկատվում է նաև Ինդոսի հովտում: Չի բացառվում, որ այս գործընթացը ազդել է Իրանական սարահարթի մշակութապատմական քարտեզի փոփոխան վրա: Մ.թ.ա. II հազարամյակի առաջին կեսից, դադարել է վաղդասակարգային հասարակության և պետության զարգացման գործընթացը, որը տեղի էր ունենում պրոտոքաղաքական քաղաքակրթություններում:

Համենայն դեպս մ.թ.ա. II հազարամյակի կեսից հին Իրանի ցեղերի մշակույթում տեղի են ունենում նշանակալի փոփոխություններ: Սկսվում է երրորդ մեծ ժամանակաշրջանը, որն ավարտվում է մ.թ.ա. VII-VI դդ. մեդական, իսկ այնուհետև աքեմենյան պետությունների ձևավորմամբ, երբ դասակարգային հարաբերությունների սիստեմը տարածվում է ամբողջ երկրով (Дандамаев, Луконин, 1980):

Մ.թ.ա. II հազարամյակի սկզբում մշակութային գործընթացի վրա վճռորոշ ազդեցություն է ունեցել երկու գործոն: Առաջինը՝ պրոտոքաղաքների՝ Հիսարի և Շահրի-Սոխտե տիպի քաղաքակրթությունների փլուզումն է և նոր կազմավորված դասակարգային հարաբերությունների և պետականության ձևավորումն է, որն արագացել է արևմտյան ծայրամասում Առաջավոր Ասիայի պետությունների՝ Միտանիի, իսկ այնուհետև Ասորստանի ռազմաքաղաքական փոխազդեցությամբ:

Երկրորդ գործոնը, հատկապես հյուսիսային շրջանում, տարածված համալիրներն են, որոնց մշակութային կրողները զինված հեծյալներն են, որոնց մեջ տեղի է ունենում վերնախավի առանձնացում: Վերնախավը կուտակել էր նկատելի հարստություն, որը մասամբ գտնվել է նրանց դամբարաններում:

Այս ժամանակաշրջանի նյութը սովորաբար հարուստ է և տպավորիչ: Այն հայտնի է սիրողական, իսկ երբեմն ուղղակի թալանչիական պեղումներից և

այդ պատճառով ժամանակակից մեթոդական մակարդակով ուսումնասիրված հուշարձանների թիվը մեծ չէ։ Այսպես, Խուրվինի դամբարանադաշտում, որը գտնվում է Թեհրանից 80կմ հյուսիս-արևմուտք, բազում տասնյակ գերեզմաններից ընդամենը մի քանիսն են պեղվել հնագետների հսկողությամբ (Vanden Berghe, 1964)։ Այս մ.թ.ա. XIII-XI դդ. հուշարձանը այս ժամանակաշրջանի էտալոնային հուշարձաններից մեկն է։ Թաղումները կատարվում էին քարով ծածկված փոսերում, կողքի վրա կծկված։ Տիպիկ է գորշ և կարմիր ոչ գունազարդ խեցեղենը, ընդ որում բնորոշ ձևերից են միականթ կճուճները, քթիկով անոթները, որոնք ավարտվում են կոցանման քթիկով երեք ոտքի վրա թասերը։ Բրոնզե իրերից կարելի է նշել դաշույններն ու հայելիները։ Կան նաև բրոնզե և կավե զինված ռազմիկներ պատկերող արձանիկներ։

Հարավային Մերձկասպյան շրջանում՝ ժամանակակից Գիլյան մարզի տարածքում, ուսումնասիրվել են մի շարք հարուստ դամբարաններ (Negahban, 1964)։ Դրանցից ամենահայտնին Մարլիկ դամբարանադաշտն է։ Գերեզմանների մեծ մասը կառուցված է թերթաքարի սալիկներից և գլաքարից 3X5 մ. չափսով։ Հայտնի են նաև քարարկղեր, շարված խոշոր սալերից 3X3մ չափսով։ Երբեմն հիմնական գերեզմանին կից էր 1X2 մ. չափսով քարարկղ ձիու կմախքի և լծասարքի (գլխավորապես սանձեր) մնացորդներով։ Կարմիր և սև խեցեղենը ունի Խուրվինի նյութի փոփոխված ձևերը, բայց կան նաև զոոմորֆ և անտրոպոմորֆ անոթներ։ Արտահայտիչ են ցլի տեսքով անոթները, որոնց դունչը վերածվում է անոթի քթիկի, իսկ ցլի ականջներից կախված են երկու ոսկե կախիկներ։ Բնորոշ է մեծ քանակությամբ բրոնզե զենքը՝ նիզակներ, նետեր, թրեր, դաշույններ և գուրզեր։ Հետաքրքիր են կենդանիների բրոնզե արձանիկները, որոնց թվում լծված ցլեր. կան նաև մարդկանց մեծմասամբ զինված ռազմիկների արձանիկներ։ Գտնվել է երկու ձի լծված ռազմակառքի մոդել, որի վրա կանգնած է զինված կառապան։ Մարլիկի դամբարանները աչքի են ընկնում տորևտիկ իրերի հարստությամբ, մասնավորապես ոսկե անոթներով։ Դրանց համար բնորոշ է հատկապես ներսի կողմից քանդակադրոշմը, որն արտահայտվում է բարձր և ցածր ռելիեֆով և ընդգծում է պատկերների մկանները կլորավուն պայմանանիշով (պոանսոնով)։ Ոսկյա անոթների ռելիեֆները որպես կանոն վերարտադրում են բարդ տեսարաններ՝ վերցված Միջագետքի արվեստից, գլխավորապես, հավանաբար Ասորստանից (թևավոր ցուլեր, գրիֆոններ, կենաց ծառ)։ Դրա հետ մեկտեղ մի շարք գիտնականներ հակված են մեկնաբանել որոշ տեսարաններ դատելով սյուժեից, որը ներկայացնում է հին իրանական դիցաբանությունը արտացոլված Ավեստայում (Курочкин, 1974)։ Մարլիկում կան նաև գլանաձև կնիքներ ինչպես ներմուծված (միտանիական XV-XI դդ.

մ.թ.ա., ասորական XII-IX դդ. մ.թ.ա.), այնպես էլ տեղական՝ պատրաստված գիպսից և ոսկուց։ Մարլիկի թվագրության մասին տարբեր կարծիքներ կան։ Ընդհանուր առմամբ Մարլիկը հավանաբար ժամանակագրորեն մոտ է Խուրվինին, կամ թվագրվում է այդ դամբարաններից քիչ ավելի ուշ։

Այս տիպի մեկ այլ դամբարան՝ Կալուրազը գտնվում է Գիլյանում և նման է քարարկղային թաղումներին։ Այստեղ, ինչպես Մարլիկում, կա սև-գորշ և կարմիր խեղեցեն և բազմաթիվ զենքեր՝ դաշույններ, թրեր, նիզակներ, կացիններ, նետեր։ Բնորոշ են ձիու լուծքի մասերը, զարդերը. արծաթյա և ոսկյա անոթները ռելիեֆով են և պատկանում են հիմնականում նույն գեղարվեստական դպրոցին ինչ որ Մարլիկի տորևտիկ իրերը։

Այս ժամանակաշրջանի համար յուրահատուկ են Իրանի կենտրոնական շրջանի մշակույթները, որոնք հայտնի են Սիալկի երկու դամբարանների պեղումներից։ Դրանցից մեկը՝ Սիալկ A դամբարանի թաղումներն են սև-գորշ և գազարագույն-դեղին խեցեղենով։ Տոտիկների վրա անոթները և քթիկով անոթները նման են Խուրվինի նյութին։ Բրոնզե իրերի հետ մեկտեղ թաղումներում կան և առանձին երկաթյա իրեր, որոնք թույլ են տալիս թվագրել դամբարանը մ.թ.ա. II հազարամյակի վերջով, կամ նույնիսկ մ.թ.ա. I հազարամյակի սկիզբով։ Սիալկ B երկրորդ դամբարանները թվագրվում են մ.թ.ա. IX-VII դդ։ Այստեղ թաղումները քարարկղային են՝ երկթեք ծածկով։ Սև-գորշ խեցեղենի կողքին կան գունազարդ խեցեղենի նմուշներ հատկապես երկու քթիկով անոթներում։ Հատկանշական է, որ մի շարք անոթներ պատկերում են ձիեր։ Բուն գերեզմանում բրոնզե և արծաթյա զենքի կողքին կան նաև ձիու սանձեր։

Համալիրներ նույն բաղկացուցիչ տարրերով (քարարկղային դամբարաններ, ձիու լծասարք, զենք, գեղարվեստական մետաղ) տիպիկ են նաև մ.թ.ա. II հազարամյակի վերջի Լուրսիտանին։ Այստեղ դամբարանները թալանվել են գանձագողերի կողմից և մեծ քանակությամբ լուրիստանյան բրոնզե իրեր դուրս է բերվել հնությունների շուկա և ցրվել մասնավոր հավաքածուներում (Дандамаев, Луконин, 1980)։ Գորշ և սև խեցեղենը հազվադեպ է, ինչը ցույց է տալիս մշակութային հատուկ շրջանին, իսկ ավելի հավանական է հատուկ հնագիտական մշակույթին պատկանելը։ Գեղարվեստական իրերի թվում են բրոնզե սպառազենքի իրեր, երասաններ, ծիսական կացիններ, կենդանիների ձուլածո արձանիկներ, ծիսական այլ իրեր։ Իրական կենդանիների կողքին լայն տարածված են ֆանտաստիկ կենդանիների պատկերներ, հրեշներ, որոնք միավորում են տարբեր կենդանիների հատկանշաններ։ Կան մարդակերպ արձանիկներ և այսպես կոչված «չար ոգիներ»։ Լուրիստանյան բրոնզի վառ արտահայտությունը, առանձին սյուժեները և մարդկանց ու կենդանիների պատկեր-

ման ձևը, որոշ դեպքերում նախատիպ է «սկյութական գազանների» ոճին: Լուրսիտանյան հատկանշական զենքերից՝ դաշույններն ունեն հարթ ելուստներով բռնակ, որոնք դրվագավորված են ոսկրով և այլ նյութերով:

Եթե վերը նշվածը գլխավորապես դամբարաններ էին, ապա հյուսիս-արևմտյան Իրանի ուշ բրոնզի և վաղ երկաթի մշակույթը հայտնի է բնակավայրերի պեղումներից (Dyson, 1969): Հասանլուի V-IV շերտերում գտնվել է մեծ քանակությամբ սև-գորշ և կարմիր խեցեղեն, որը բնութագրում է մ.թ.ա. II հազարամյակի վերջը և I հազարամյակի սկիզբը:

Այդ ժամանակ բուն Հասանլուն իրենից ներկայացնում էր քաղաքային տիպի կենտրոն՝ օվալաձև հատակագծով միջնաբերդ, որի պատերը ամրացված էին աշտարակներով: Պեղվել են երկհարկ մոնումենտալ շինություններ, որոնք ներկայացնում են պալատական համալիրի մի մաս: Տանիքը փլվել էր աղետից առաջացած հրդեհի պատճառով: Պեղումների ժամանակ գտնվել են բազմաթիվ բրոնզե, փղոսկրյա, ոսկյա և եգիպտական պաստայից նյութեր: Տպավորիչ գտածո է ռելիեֆներով ոսկյա սկիհը, որը պատկանում է գեղարվեստական նույն տիպի իրերին ինչպիսին են՝ Մարլիկի և Կալուրազի ոսկե անոթները:

Ենթադրվում է, որ սկիհը պատկանում է մ.թ.ա. XII-XI դդ. և երկար ժամանակ պահվել է գանձարանում՝ որպես ծիսական առարկա: Եվ իսկապես, սկիհի մոտ գտնվել են ոսկեջրած զենքով զինված երեք զինվորների կմախքներ: Ամենայն հավանականությամբ, վտանգի բոպեին զինվորները փորձել են փրկել սրբազան անոթը: Հասանլու III շերտը վերաբերում է մ.թ.ա. 800-650 թթ. և բնորոշվում է գունազարդ խեցեղենով: Ենթադրվում է, որ Հասանլուն այդ ժամանակ մայրաքաղաք էր, կամ առնվազն Մաննա պետության կարևոր կենտրոն:

Այս անկասկած հետաքրքիր և կարևոր նյութի մեկնաբանության վերաբերյալ շատ գրականություն կա (Young, 1965, 1985):

Ամենամեծ տարածում է ստացել է Ռ. Դայսոնի, Թ. Կայլեր Յանգի տեսությունը: Նրանք առաջարկել են երկաթի դարի երեք շրջան (Ե.Դ. I, II, III): Այս ժամանակագրության համաձայն Ե.Դ. I (1300-1000 թթ. մ.թ.ա.) բնորոշվում է սև-գորշ խեցեղենով, մուգ դեղին և հազվադեպ հանդիպող գունազարդ խեցեղենով: Ե.Դ. II շրջանում (1000-800թթ մ.թ.ա.) սև-գորշ խեցեղենի հետ մեկտեղ լայն կիրառություն է ստանում գունազարդ խեցեղենը, իսկ Ե.Դ. III (800-550 թթ. մ.թ.ա.) սև-գորշ խեցեղենը անհետանում է և գերակշռում է մուգ դեղին և կարմիր խեցեղենը: Գիտնականները ենթադրում են, որ Երկաթե Դարի I շրջանի սկիզբը նշանավորվում է բնակչության փոփոխությամբ և այն ուղղակիորեն կապում են այս փոփոխությունը իրանալեզու ցեղերի տարածման հետ, որոնք ավելի ուշ հիմնեցին Մեդական և Աքեմենյան պետությունները: Քարարկղային

դամբարանները, որոնցում թաղված են հեծյալ զինվորներ, այս կոնտեքստում դիտվում են որպես գերեզմաններ, որոնք թողնված են հենց իրանալեզու բնակչության կողմից։ Այս հայացքի ծայրահեղ ձևը արտահայտվել է իրանական հեղինակներից մեկի կողմից, որը պնդում է, որ մ.թ.ա. II հազարամյակի վերջում և մ.թ.ա. I հազարամյակի սկզբում գոյություն է ունեցել հին իրանական հզոր պետություն, որի վերնախավին է պատկանում Մարլիկի «թագավորական» դամբարանը։

Քննադատելով նման հայացքները՝ խորհրդային գիտնականները իրավացիորեն նշում են այդ ժամանակաշրջանի հյուսիսային և արևմտյան Իրանի տարածքում միատարր մշակութային միասնության բացակայությունը (Медведская, 1978)։ Նման միասնություն դժվար է սպասել մի ժամանակում, երբ ակներև են, ինչպես վկայում են մասնավորապես հնագիտական նյութերը, մշակութային ասիմիլյացիայի և սինթեզի բարդ պրոցեսները։ Սակայն համալիրների լայն տարածման փաստը, կասկած չի հարուցում։ Համալիրների մշակույթը կրող կառամարտիկներն ու հեծյալները ունեին իրենց տեղական տարբերությունները, որոնք արտացոլվում են նախ և առաջ խեցեղենում և ավելի քիչ զենքի տիպերում։ Հարուստ դամբարանները պատկանում են ռազմական ավագանուն, որոնց ձեռքում էր կուտակվել խոշոր հարստություն։

Այս ռազմական ավագանու և ղեկավար-քրմերի դամբարանները վառ վկայում են հասարակության սոցիալական շերտավորման մասին, բայց դեռ վաղ է, ինչպես կարծում են գիտնականներ հայտարարել, որ դրանք թագավորական դամբարաններ են։ Գործընթացում, որն ակներևաբար գնում է դեպի դասաառաջացում կարևոր դեր է խաղում ռազմական գործոնը, որն առանձնացնում է III շրջանը ավելի վաղ նախաքաղաքային քաղաքակրթությունների շրջանից և փուլային տեսանկյունից հիշեցնում է մ.թ.ա. III հազարամյակում Փոքր Ասիայում ստեղծված իրավիճակը։ Կապը բազմաթիվ մշակութային նորամուծությունների և իրանալեզու բնակչության տարբեր խմբերի տարածման միջև մնում է շատ հավանական ենթադրություն։ Իհարկե, այս գործընթացի կոնկրետ պատկերների վերականգնումը հետագա ուսումնասիրություն է պահանջում։ Առավել ևս, որ գրեթե ամենուր հնագիտական համալիրներում նկատելիորեն ազդել են տեղական մշակութային գործընթացները։ Այդպիսին է հյուսիսային շրջանում «գորշ խեցեղենի մշակույթի» նախնական շերտը, որն այդքան արտահայտիչ ներկայացված է միջին բրոնզի ժամանակաշրջանի համար Հիսար III։

Ուշ բրոնզի և վաղ երկաթի մշակութային ավանդույթների հիմքի վրա կազմավորվել է Մեդական և Աքեմենյան պետությունների քաղաքակրթությու-

նը։ Ընդհանուր ինքնաբուխ վերափոխությունների, որպես մշակութագենեզի գլխավոր ուղվածության դեպքում մենք դուրս գալով կոնկրետ մակարդակի, տեսնում ենք ոչ թե միագիծ էվոլյուցիայի պարզունակ մոդել այլ բարդ դիալեկտիկական գործընթաց։

Դանդաղեցման երևույթները և որոշակի մշակութային ապաինտեգրացումը, որ նկատվում է մ.թ.ա. III - II հազարամյակների սահմանում, շոշափել են մի շարք հիմնական օջախները, որտեղ տեղի էր ունենում տեղական նախաքաղաքային քաղաքակրթությունների ձևավորումը։ Ըստ էության միայն Էլամական քաղաքակրթությունն էր, որ ապահով ինտեգրացված լինելով Առաջավոր Ասիայի պետությունների դասակարգային հասարակությունների սիստեմում, դուրս էր մնացել հետադիմական երևույթների սահմաններից, որոնք ընդգրկում էր Զագրոսից՝ Ինդոս ձգվող ահռելի տարածքը։

Գրականության ցանկ

1. **Amiet P.** Antiquite´s du De´sert du Lut: 2 RA. 1976, N70.
2. **Amiet P.** La pe´riode IV de Tepe Sialk reconsidere´e: De l´Indus aux Balkans // Recueil a la me´moire de Jean Deshayes. Paris, 1985.
3. **Amiet P.** L´age des e´nchanges inter- iraniens 3500-1700 a.J.C.Paris,1986.
4. **Amiet P.** Nouvelles acquisitions des de´partaments des Antiquite´s orientales. La revue du Louvre et des Muse´es de France 1987.N1.
5. **Arne T. J.** Excavations at Shah Tepe: Iran Sino- Swedish expedition: Publ.27// Archaeology. Stockolm, 1945.N5.
6. Berthoud Th.,Frangaix J. Contribution a l'etude de la metallurgie de Suse aux IV et III mille´naires. Paris, 1980.
7. **Breton L. le.** Note sur la ce´ramique peinte aux environs de Suse et a Suse// MDP.1947.T 30.
8. **Breton L. le.** The early periods at Susa: Mesopotamian relations Iraq.1957.Vol.19.pt 2.
9. **Bovington C. H., Dyson R. H., Mahadavi A., Masoun R.** The radiocarbon evidence for the terminal date of the Hissar III C. culture Iran, 1974. Vol. 12.
10. **Bulgarelli G. M.** Lithic industry of the Tepe Hissar in the light of recent excavations. SAA. 1977.
11. **Caldwell J. R.** Investigations at Tali- Iblis.Springfield (III.)1967.
12. **Canal D.** La terrasse haute de l' Acropol de Suse// Cahier de la De´le´gation arche´ologique Française en Iran. 1978.N 9.
13. **Cleuzious S.,** Constantini L. Premiers e´le´ments sur la´griculture protohistorique de l ´Arabie Orientale // Pale´orie´nt, 1980. N 6.
14. Contenau C., Ghirsman R. Fouilles du Tepe- Giyan preªs de Ne´havend. Paris, 1935.
15. **Deshayes J.** Rapport pre´liminaire sur les deux premie´res compagnes de fouilles a´ Tureng Te´p´e, Syria. 1963. Vol. 12

16. **Deshayes J.** La XI campagne de fouilles a´ Tureng Te´p´e. Pale´orie´nt.1974.Vol. 2
17. **Deshayes J.** Les fouilles re´centes de Tureng Te´p´e: La terrasse haute de la fin III millenaire,

Comptes rendus de l' Acade´mie des Inscriptions et Belles-lettres.Nov.de´c.1975.

18. **Dollfus G.** Djaffarabad, Djowi, Bendebal:Contribution a´ l'e´tude de la Susiene au V mille´nair´ et au debut du III mille´naire.Pale´orient.1987.Vol. 4.
19. **Dyson R. H.** Protohistoric Iran as seen from Hassanlu YNES.1965b.Vol. 24.
20. **Dyson R. H.** A decade in Iran expedition.1969.Vol. 2, N 2.
21. **Frifelt V.** Oman during the third millenium B.C. Urban development of fishing farming communitie´s.SAA. 1977. Naples, 1979. Vol. 1.
22. **Ghirshman R.** Fouilles de Sialk. Paris. 1938- 1939.Vol. 1-2.
23. **Ghirshman R.** l' Iran des origines a´ l'Islam. Paris, 1951.
24. **Goff C.** Luristan before the Iron Age. Iran. 1971, Vol. 9.
25. Hakemi A. De´couvertes d'une civilisation prehis´torique a Xabis §Shahdad¦, Kerman: Epoque chalcolithique. Cataloque de l' Exposition: Lut Shahdad Xabis. Te´he´ran, 1972.
26. **Hole F.,** Flannery K.V., Neely J.A. Prehistory and human ecology of Deh Luran Plain. Ann Arbor, 1969.
27. **Johnson G. A** Local exchange and early state development in South- Western Iran, Ann Arbor, 1973:
28. **Lamberg- Karlovsky C. C.** Excavation at Tepe Yahya Iran 1967-1969. Cambridge (Mass.), 1970.
29. **Lamberg- Karlovsky C. C.** Trade mechanis´ms in Indus- Mesopotamian interrelations.Journ. of Orient Soc. 1972 N2.
30. **Lamberg- Karlovsky C. C.,** Tosi M. Shahr-i Sokhta and Tepe Yahya:Tracts on the earliest history on the Iranian Plateau. EW.1973, Vol. 23.
31. Lamberg- Karlovsky C.C. Excavations at Tepe Yahya, Iran. 1967-1975: The Early Periods Amer. School of Prehistoric Res. Bull. N 38. Cambridge (Mass.), 1986.
32. **Langsdorff A., Mac Cown D. E. Talli-i Bakun:** A season of 1932. OIP. 1942. Vol. 59.
33. **Mac Cown D. E** The comparative stratigraphy of early Iran. SAOC, Chicago, 1942. N 23, 2ed. 1957.
34. **Majidzadeh Y.** Lapis lazuri and Great Khorasan Road Pale´orie´nt. 1982.Vol. 8,N1.
35. **Morgan J.** de. Description des objets d'art MDP. 1900.T.1.
36. **Morgan J.** de. La de´le´gation en Perse du ministere de l'instruction publique. 1897 a´ 1902. Paris, 1902.
37. **Mortensen P.** On Barbartemplets datiering. Kuml, 1970.
38. **Negahban E. O.** A preliminary report of Marlik excavation.Teheran, 1964.
39. **Piperno M.** Socio´- economic implications from the gravery and at Shahr-I Sokhta SAA. 1977. Naples, 1979. Vol.1.
40. **Porada E.** The art of ancient Iran. New York, 1965a.

41. **Potts D.** Towards an integrate history of culture change in the ancient Arabic Gulf area: Notes on Dilmun, Bahrain and the economy of ancient Sumer Journ. of Oman Studies. 1978. Vol. 4.
42. **Rostovzeff M.** Sumerian treasure of Astrabad Journ. of Egyptian Archaeology. 1919. Vol. 6, N 1.
43. **Salvatori S.,** Vidal M. A brief surface survey of the prehistoric site of Shahdad (Kerman, Iran) Rivista di Archaeologia. 1982. Ann. 6.
44. **Sarraf M. R.** Die Keramik von Tell-i-Iblis. Berlin, 1980.
45. **Schmidt E. F.** Tepe Hissar expeditions, 1931 Museum Journ. 1933. Vol. 23.
46. **Schmidt E. F.** Excavations at tepe Hissar, Damyan. Philadelphia, 1937.
47. **Sumner W.** Excavations at Tell-i Malyan, 1971-1972 Iran, 1974.Vol. 12.
48. **Sumner W.** Excavation at Tell-i Malyan (Anshan), 1974 . Iran. 1976. Vol.14.
49. Tosi M. Excavations of Shahr-i Sokhta: Preliminary report on the second campaign //1968 EW. 1969. Vol. 19, N 3-4
50. **Tosi M.** (ed.) Prehistoric Sistan. Rome, 1983.
51. **Vanden Berghe L.** la necropole de Khurvin. Leiden, 1964.
52. **Voigt M. Hajji.** Firus Tepe, Iran: The neolithic settlement. Univ. Museum Monograph/ Univ. of Pennsylvania. Philadelphia, 1983.Vol. 50.
53. **Vanden Berghe L.** Archaeologie de I'Iran ancient. Leiden, 1959.
54. **Weiss H.** Periodisation, population and early state formation in Khuzistan Bibl. Mesopotamica. 1977.Vol. 7.
55. **Weiss H., Young T. C.** The merchants of Susa: Godin V and plateau-lowland relations in the late fourth millennium Iran. 1975.Vol.13
56. **Wheeler R. E.** Early India and Pakistan to Asoka. London, 1959.
57. **Wulsin F. R.** Excavations at Tureng Tepe, near Asterabad suppl. to Bull. of Amer. Inst. for Persian Art and Archaeology. 1933.Vol. 2. March.
58. **Young T. C.** Comparative ceramic chronology for western Iran, 1500-500 B.C. Iran. 1965. Vol.3.
59. **Young T. C.** Early iron age Iran revisited: Preliminary suggestions forreanaiysis of old constructs. De l' Indus aux Balkans . Recueila: la me´moire de Jean Deshayes. Paris, 1985.
60. **Бибби Дж.** В поисках Дильмуна. М., 1984.
61. **Вайман А. А.** О связи протоэламской письменности с протошумерской . ВДИ. 1974 б. N 2.
62. **Виноградов А. В., Мамедов Э. Д.** Первобытный Лявлякан. М.,1975.
63. **Дайсон Р.** Повторное изучение Тепе Гиссар. ДЦВ. Самарканд, 1986.
64. **Дандамаев М. А., Луконин В. Г.** Культура и экономика древнего Ирана. М., 1980.
65. **Курочкин Г. И.** К интерпретации некоторых изображений раннего железного века с территории Северного Ирана. СА. 1974. N 2.
66. **Ламберг-Карловский К. Х.** Контуры древнейшей истории Иранского плато. ДЦВ.
67. **Массон В. М.,** Древнеземледельческая культура Маргианы, М.; Л., 1959.

68. **Массон В. М.** Средняя Азия и Древний Восток. М.; Л., 1964 б.
69. **Медведская И. Н.** Иран последней четверти II тыс. до н.э. по археологическим материалам: К ранней истории иранских племен:Автореф. дис….канд. ист. Наук. Л., 1978.
70. **Тоси М.** Сеистан в бронзовом веке. СА. 1971. N 3
71. **Удеумурадов Б.** Раннегородское поселение Шахри-Сохте в Юго-Восточном Иране и еги связи с культурами Южного Туркменистана.Археология Зарубежной Азии.Л., 1985.
72. **Чайлд Г.** Древнейший Восток в свете новых раскопок. М., 1956.

ՀԻՆ ԻՐԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԸ

Լիլիթ Աբաջյան

Բանալի բառեր՝ *Իրան, Վաղ երկրագործական մշակույթներ, Հասանլու, Հաջի Ֆիրուզ, Սիալկ, Վաղ քաղաքային բնակավայրեր Մարլիկ:*

Հին Իրանի հնագիտական հուշարձանները կարելի է դասդասել երեք ժամանակաշրջանի: Առաջին՝ վաղ երկրագործական – անասնապահական ժամանակաշրջանը բնորոշվում է ոռոգովի երկրագործության զարգացմամբ, աշխատանքի արդյունավետության բարձրացմամբ, բնակչության աճով, ամուր կացարանների կառուցմամբ, մետաղագործության և խեցեգործության զարգացմամբ, և, վերջապես, շումերականից տարբերվող գրային համակարգերի առաջացմամբ: Մ.թ.ա. VII-III հազ. ժամանակահատվածն ընդգրկող այս շրջանում ծաղկում էին Ֆալի Ջահրի, Թալի Մուշկի, Թալի Բաքուն, Սիալկ, Սուզ, Հաջի Ֆիրուզ, և այլ բնակավայրերը:

Երկրորդ շրջափուլին (մ.թ.ա. III հազ. – II հազ. երկրորդ կես) բնորոշ են վաղ քաղաքային բնակավայրերը (Թեփե Հիսար, Շալ թեփե, Թյուրենգ թեփե, Շահրի Սոխթե, Ցահյա թեփե, Շահդադ, Գոդին և այլն):

Մ.թ.ա. II հազ. երկրորդ կեսից Իրանի ցեղերում տեղի են ունենում զգալի փոփոխություններ: Սկսվում է երրորդ շրջափուլը, երբ նախաքաղաքային բնակավայրերը (Հիսար, Շահրի Սոխթե, Հասանլու, Խուրվին և շատ ուրիշներ) անկում են ապրում:

Երրորդ շրջափուլն ավարտվում է մ.թ.ա. VII-VI դդ., երբ ուշ բրոնզ – վաղ երկաթեդարյան մշակույթների հիման վրա կազմավորվում են պետությունները և դասակարգային հասարակությունները տարածվում են ողջ Իրանի տարածքով:

КУЛЬТУРЫ ДРЕВНЕГО ИРАНА

Лилит Абаджян

Ключевые слова: *Иран, Ранние земледельческие культуры, Хасанлу, Хаджи Фируз, Сиалк, Раннегородские поселения, Сузы, Марлик.*

В исторической археологии памятников дрвнего Ирана выделяются три периода. Первый- раннеземледельческо-скотоводческий период характеризуется развитием поливного земледелия, увеличением производительности труда и населения, постройкой добротных жилищ, развитием металлургии и керамических изделий и наконец образованием письма отличного от Шумерского. В этом периоде, охватывающим VI-III тыс. до н.э. процветали такие поселения как Фали Джахри, Тали Мушки, Тали Бакун, Сиалк, Суза, Ходжи Фируз и.т.д.

Второй период III тыс. вторая половина II тыс. до н. э. характеризуется раннегородскими культурами (Тепе Гисар, Шал-тепе, Тюренег тепе, Шахри- Сохте, Шахдад, Годин и.т.д.).

Со второй половины II тыс. среди племен Ирана происходят значительные изменения. Начинается III период, когда протогородские поселения (Гисар, Шахри Сохте, Хасанлу, Хурвин и многие другие) приходят в упадок. Третий период заканчивается VII-VI вв. д.н.э. когда на основе культур поздней бронзы и раннего железа образовываются классовые государства и классовые общества распространяются по всей территории Ирана.

THE CULTURES OF ANCIENT IRAN

Lilit Abajyan

Keywords: *Iran, Early Agriculture Cultures, Hasanlu, Haji Firuz, Sialk, Early Urban settlements, Suz, Marlik.*

In the history of archaeological monuments of prehistoric Iran three periods should be mentioned. The first (VI-III millennium B.C.) – the early agricultural and cattle farming period is characterized by the development of the irrigative agriculture increase of the productivity of labour and population, construction of well- builit comfortable houses, development of metal working industry and ceramic production and last formation of writing different from that of the Sumerian. Many big and small settlements (Tali, Muski, Tali, Bakun, Sialk, Susa, etc.) prospared in this period.

The second period includes the III millennium and the second half of the II millennium B.C. and is characterized by the early urbanian cultures (Tepe, Hissar, Shah Tepe, Tureng Tepe, Yahya Tepe, Shahr-I Sokhta, Shahdad, Godin etc.). Great changes uccurred among Iranian tribes in the second half of the II millennium B.C.. Many of the protourbanian settlements (Hasanlu, Hurvin, Shahr-i- Sokhta, Hissar) came down.

The third period of the prehistoric cultures began which ended in the VII-VI centures B.C. On the basis of the Late Bronze and Early Iron Ages there appeared class societies which spread all over the country.